Ուսումնական գործընթացի անհրաժեշտության գնահատումը կիրականացվի ԲԿՊ-ն դաշտային մակարդակում պատշաճորեն ներկայացնելու համար: Դասընթացները կներառեն, սակայն սահմանափակված չեն լինի հետևյալով՝ թափոնները հասցնել նվազագույնի, հարգել և պաշտպանել վայրի բնությունն աշխատանքային տեղամասում, թափոնների պատշաճ կառավարում, աշխատանքի ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման միջոցառումներ, արտակարգ իրավիճակների կամ միջադեպերի ժամանակ պատրաստվածություն և այլն: Առանձին ուսուցում պետք է կազմակերպվի ազդեցության ենթարկվող հարակից համայնքների համար՝ ԲԼՄ-ի մասին իրազեկելու և շինարարության ընթացքում մարդկանց պատահարներից զերծ պահելու նպատակով: Հատուկ ուսուցում կանցկացվի նաև բեռնատարների և այլ մեքենաների վարորդների համար:

9.4 Ծախսերը և ֆինանսավորման աղբյուրները

Շրջակա միջավայրի պահպանման արժեքը, որպես առանձին վճարման ենթակա միավոր, կներառվի Ծավալների ամփոփագրում և հաշվարկված է Աշխատանքների արժեքի 2%-ի չափով: Բացի այդ, շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ծախսերը (վերահսկողություն, հետազոտություններ, ուսուցումներ, հաղորդակցություն հանրության հետ, հաշվետվություններ) կնախատեսվեն նաև Ինժեների բյուջեում՝ առաջարկի պահանջի շրջանակում:

ԲԿՊ-ի և համապատասխան ենթապլանների ծախսերը կազմում են Ծրագրի իրականացման ուղղակի ծախսերի մի մասը: Այսպիսով՝ ծախսերը գնահատվում են Կապալառուի կողմից որպես Ծրագրի երեք ընդհանուր փուլերի՝ նախաշինարարական, շինարարական և հետշինարարական շահագործման փուլերի սահմանային ծախսեր: Ինդիկատիվ ծախսերը ներկայացված են ԲԿՊ-ում:

9.5 Հաշվետվություն

Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության վերաբերյալ պետք է պարբերաբար զեկուցվի ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում՝ Կապալառու, Ինժեներ, ՃԴ/ ՏԿԵՆ և ՎԶԵԲ:

Կապալառուի կողմից Ինժեներին պետք է ներկայացվեն հետևյալ բնապահպանական հաշվետվությունները.

Շրջակա միջավայրի վերաբերյալ շաբաթական հաշվետվություններ. շրջակա միջավայրի մոնիտորինգի արդյունքներն ու եզրակացությունները կփաստաթղթավորվեն Կապալառուի կողմից հատուկ մշակված և Ինժեների կողմից հաստատված մոնիտորինգի ստուգաթերթիկում: Մոնիտորինգի շաբաթական հաշվետվությունը պետք է ներառի բնապահպանական կատարման ցուցանիշը և մեղմացնող միջոցառումների արդյունավետության գնահատումը:

Առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություն. շրջակա միջավայրի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը պետք է ներկայացվի որպես Կապալառուի ամսական առաջընթացի վերաբերյալ հաշվետվության մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական բնույթի և բացատրություններ ապահովեն շեղումների, անհամապատասխանությունների և այլ խնդիրների վերաբերյալ:

Հաշվետվությունները պետք է համակողմանիորեն ներառեն ԲԿՊ և ՏԲԿՊ մեղմացնող միջոցառումների (մատնանշել մեղմացնող միջոցառումների տեսակը, նպատակը և խնդիր(ները), վայրը/ տեղադիրքը, ներգրավված նյութերը և գործունեությունները և այլն) իրականացման բոլոր համապատասխան ասպեկտները՝ բնապահպանական կանոնակարգերի և պահանջների (ուսուցում/կողմնորոշում, թույլտվություններ, արտոնագիր և այլն) համաձայն՝ իրականացված հաշվետու ժամանակահատվածում: Հաշվետվությունների կառուցվածքը կհամաձայնեցվի Ինժեների և ՃԴ-ի հետ և կներառի մոնիտորինգի ենթարկվող հետևյալ պարամետրերը՝.

- աշխատանքային տեղամասեր
- աշխատանքային տեղամասերի անվտանգություն. շինհրապարակի աշխատողներ և հարակից համայնքներ
- նյութերի և թափոնների կառավարում և տեղավորում, այդ թվում՝ վտանգավոր թափոնները
- Կապալառուի հարմարություններ և սարքավորումներ
- քարհանքերի, բացահանքեր և հանույթի նյութի դատարկման վայր
- հանրային հաղորդակցություն և բողոքարկումներ

Պատահարների դեպքում (կրակ, պայթյուն, նավթի կամ բիտումի արտահոսք և այլն), Կապալառուն պարտավոր է անմիջապես տեղեկացնել Ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, որին պետք է հետևի գրավոր զեկույցը՝ պատահարից հետո 24 ժամվա ընթացքում:

Վերահսկող Ինժեները ՃԴ-ին պետք է ներկայացնի բնապահպանական երաշխիքների վերաբերյալ ամսական հաշվետվություն՝ որպես ամսական և եռամսյակային առաջընթացի հաշվետվությունների մի մաս: Նաև Ինժեները ՃԴ-ին պետք է ներկայացնի բնապահպանական

երաշխիքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություն ՎԶԵԲ-ին ներկայացնելու նպատակով: Կիսամյակային հաշվետվությունները պետք է հրապարակվեն ՃԴ-ի և ՎԶԵԲ-ի կայքէջերում:

10 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Եզրակացություններ

ՀՀ բնապահպանական օրենքների համաձայն՝ 10 կմ-ից ավել ճանապարհի կառուցման (կամ վերակառուցման) դեպքում անհրաժեշտ է իրականացնել բնապահպանական փորձաքննություն: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հանդիսանում է փորձաքննական գործընթացի հիմնական փուլի առաջին փաստաթուղթը:

Համաձայն ՀՀ ՇՄԱԳ օրենսդրության, Ծրագրի համար պահանջվում են ՇՄԱԳ ընթացակարգ և փորձաքննություն: Հնարավոր բացասական ազդեցությունները (օրինակ՝ անհարմարություններ/անհանգստություններ կապված փոշու, աղմուկի հետ, երթևեկության և մուտքի փոփոխություններ), որոնք ամենայն հավանականությամբ կանդրադառնան նաև հարակից համայնքների վրա, ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհների վրա, կապված են տեղադիրքի և շինարարական աշխատանքների հետ, կունենան ժամանակավոր ազդեցություններ և կարող են նվազեցվել՝ հետևելով աշխատանքային տեղամասի համար մշակված բնապահպանական կառավարման պլանին, ապահովելով համապատասխան վերահսկողություն և ժամանակին իրականացնելով ԲԿՊ-ում սահմանված անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները:

ՇՄԱԳ հաշվետվության պատրաստման ընթացքում ուսումնասիրվել են օդի որակը, աղմուկի և թրթռումների մակարդակները՝ բնապահպանական ելակետային տվյալները թարմացնելու համար: Բացի այդ, իրականացվել են մի շարք հետազոտություններ ազդեցության ենթակա տարածքում կենսաբազմազանության(ներառյալ հատուկ պահպանվող տարածքները), պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանների նույնականացման համար:

Բացի այդ, հարկ է նշել, որ գոյություն ունեցող ճանապարհի բարելավումը կնպաստի երթևեկության շարժին և կշատացնի տնտեսական հնարավորությունները՝ ապահովելով.

- աշխատանքային հնարավորություններ շինարարության և շահագործման ընթացքում,
- այնպիսի մշակութային ենթակառուցվածք, որը կբարելավի մարդկանց և ապրանքների տեղաշարժը և կնպաստի Հայաստանի այս շրջանի զարգացմանը,
- ազատ մուտք դեպի տուրիստական և մշակութային վայրերը,
- և այլն

Ծրագրի հիմնական առավելությունները ներառում տնտեսական օգուտները:

10.2 Առաջարկություններ

Շինարարության Կապալառուն կդիտարկի սույն ՇՄԱԳ-ը և ԲԿՊ-ն՝ որպես պայմանագրի մաս:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Կապալառուն պետք է պատրաստի տեղամասին հատուկ շրջակա միջավայրի կառավարման պլան (ՏԲԿՊ), որոնք կներկայացնեն մանրամասն գործառնական բնապահպանական կառավարման և մոնիտորինգի միջոցառումները մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարական գործողությունների ողջ ժամանակահատվածում և թերությունների վերացման ժամանակահատվածում:

Ինժեները մոնիտորինգի կենթարկի և կվերահսկի մեղմացնող միջոցառումների իրականացումը Կապալառուի կողմից և կներկայացնի անհամապատասխանության ծանուցում դրանց ոչ պատշաճ, ոչ ժամանակին իրականացման առնչությամբ: Ինժեները իրավասու է դադարեցնել բոլոր համապատասխան աշխատանքները (Կապալառուի ծախսերով), քանի դեռ ՇՄԱԳ-ի և ԲԿՊ-ի պահանջները չեն իրականացվել և շտկվել՝ ի գոհունակություն Ինժեների:

Շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՎՋԵԲ երաշխիքներին և ՀՀ օրենսդրությանը պետք է ստուգվի Կապալառուի, Ինժեների և ԾԻԿ-ի կողմից իրականացվող կանոնավոր մոնիտորինգների միջոցով:

Կապալառուի բնապահպանության մասնագետը Ինժեների բնապահպանության մասնագետի հետ միասին կուսումնասիրի մինչ օտարումը համայնքային, անտառային և այլ(ոչ մասնավոր) նշանակության հանդիսացող հողերի տարածքում ծառերի և թփերի տեղը, որոնք ամենայն հավանականությամբ կվնասվեն շինարարական աշխատանքների ընթացքում, և կառաջարկի մեթոդներ՝ դրանց կորուստը կանխելու համար: Բոլոր ծառերն ու թփերը, որոնք չեն ենթարկվում շինարարական գործողությունների ազդեցությանը, սակայն մոտ են գտնվում աշխատանքային տեղամասին, պետք է պահպանվեն: Մնացած բոլոր ծառերն ու թփերը, որոնք չեն կարող պահպանվել, պետք է վերատնկվեն առնվազն 6:1 հարաբերակցությամբ (Կարմիր գրքային տեսակները՝ 10:1, եթե այդպիսիք իհայտ գան): Պետք է օգտագործվեն տեղական տեսակներ վերատնկման համար: Նորատունկ ծառերը պետք է 3 տարի խնամվեն Կապալառուի կողմից, մինչև դրանց կենսունակ դառնալը:

11 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՏՐԱՆՇ 4՝ ՍԻՍԻԱՆ - ՔԱՋԱՐԱՆ ՄՈՏ 60 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) ներկայացնում է մի շարք մեղմացնող և մոնիթորինգի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ծրագրի իրականացման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու կամ մեղմացնելու համար: Այն ներկայացնում է հնարավոր ազդեցությունները, դրանց գտնվելու վայրերը, ինչպես նաև առաջարկվող մեղմացնող միջոցառումները, միջոցառումների իրականացման պատասխանատու մարմիններին և մոնիթորինգի գործողությունները, ներառյալ գնահատված ծախսերը:

ԲԿՊ-ն նկարագրում է, թե ինչպես են իրականացվելու և մոնիթորինգի ենթարկվելու շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մեղմացման և այլ միջոցառումները: Այն բացատրում է, թե ինչպես են միջոցառումները մշակվելու և կառավարվելու, ովքեր են պատասխանատու լինելու դրանց իրականացման համար, երբ և որտեղ են դրանք իրականացվելու, և ում կողմից են մոնիթորինգի ենթարկվելու: ԲԿՊ-ում նկարագրվում են հետևյալ տարրերը՝

(i) ԲԿՊ-ի առարկա հանդիսացող ծրագրի գործողությունները

(ii) Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները (ներառյալ ազդեցությունները հնագիտական ռեսուրսների վրա)

(iii) Մեղմացմնող միջոցառումներ սույն ծրագրի նախաշինարարական, շինարարության և շահագործման փուլերում

(iv) Մոնիթորինգի գործողություններ սույն ծրագրի նախաշինարարական, շինարարության և շահագործման փուլերում

(v) Տարբեր կողմերի պատասխանատվությունները մեղմացման և մոնիթորինգի միջոցառումներն իրականացնելիս և

(vi) Բնապահպանական կառավարման և մեղմացման միջոցառումների ինդիկատիվ ծախսերը:

Սույն ԲՍԿՊ-ի շրջանակը ներառում է Ծրագրի և՛ շինարարական, և՛ շահագործման փուլերը: Հետևաբար, Պլանը կկիրառվի բոլոր Կապալառուների և ենթակապա- լառուների և Ճանապարհային դեպարտամենտի (ՃԴ) նկատմամբ, որոնք ներգրավված են Ծրագրի բոլոր բաղադրիչների շինարարության, շահագործման և պահպանման գործընթացում, ներառյալ.

- Ճանապարհն ինքը՝ ներառյալ հատումները, շեպերը, հենապատերը, հեղեղատարները և այլն,
- Թունելները,
- Կամուրջները,
- Քարհանքերը և ազակոպճային հանքերը,

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

- Ասֆալտի գործարանը,
- Բետոնի գործարանը,
- Շինարարական ճամբարը(ները),
- Կապալառուի զբաղեցրաց այլ տարածքերը:

Սույն ԲՍԿՊ-ի մշակումը համահունչ է ISO 14001:2015 ստանդարտի պահանջներին, որոնք սահմանված են Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության (ISO) կողմից բնապահպանական կառավարման համակարգերի համար: ISO14001-ը միջազգայնորեն ճանաչված ստանդարտ է՝ բնապահպանական պարտավորությունները համակարգված կերպով կառավարելու և բնապահպանական արդյունավետությանը հասնելու համար:

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ				
Ելակետային մոնիտորինգի հետազոտություններ (օդի, ջրի որակ, աղմուկ և թրթռում) ֆլորայի, ֆաունայի, ինչպես նաև հնագիտական, պատմական և մշակութային հուշարձանների վրա ազդեցությունները և դրանց մեղմացման միջոցառումները Հանրային հաղորդուղիների պաշտպանություն և	Շինարարության փուլի ընթացքում մոնիտորինգի համար նախատեսված ելակետային տվյալների բացակայություն Ազդեցություններ ֆլորայի, ֆաունայի և հնագիտական, պատմական և մշակութային հուշարձանների վրա Ծառայությունների ընդհատումներ հաղորդուղիների տեղափոխման հետևանքով	Մշակել ԲԿՊ, ելակետային մոնիտորինգի հետազոտությունների արդյունքները՝ մանրամասն նախագիծն արտացոլելու և մրցութային և պայմանագրային փաստաթղթերի մեջ ներառելու համար Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի մեջ ներառել հատուկ պահանջներ	**<u>Նախագծի խորհրդատու</u>** Մշակել ԲԿՊ և մրցութային և պայմանագրայինփաստաթղթերում ներառել համապատասխան դրույթներ: **<u>ՃԴ</u>** Գնահատել մրցութային հայտերը և շնորհել պայմանագիրը **<u>ՎՋԵԲ</u>** ԲԿՊ-ի վերաբերյալ առարկությունների բացակայություն	Այս գործողությունների ծախսերը ներառված են նախագծման խորհրդատուի բյուջեում

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
տեղափոխում				
Մրցույթային և պայմանագրային փաստաթղթերի նախապատրաստում	ԲԿՊ-ի պահանջները նկատի առնված չեն մանրամասն նախագծի մեջ, ինչը , հանգեցնում է ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների	Մշակել տեխնիկական մասնագրեր՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների վրա, ինչպես նաև մրցույթային և պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմանների մեջ ընդգրկել բնապահպանական ոլորտի դրույթներ	**<u>Նախագծի Խորհրդատու</u>** Մշակել տեխնիկական մասնագրեր և թարմացնել մրցույթային և պայմանագրային փաստաթղթերը՝ ներառելով շրջակա միջավայրի վերաբերյալ համապատասխան դրույթներ **<u>ՃԴ</u>** Դիտարկել մրցույթային և պայմանագրային փաստաթղթերը **<u>ՎՋԵԲ</u>** Տեղեկացված լինել ՃԴ-ի դիտարկման արդյունքների մասին	Արժեքը ներառված է նախագծման խորհրդատուի բյուջեի մեջ

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնագրերի ստացում	ԲԿՊ-ի պահանջները նկատի առնված չեն, ինչը հանգեցնում է ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների	Ստանալ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և կնքել բոլոր պահանջվող պայմանագրերը, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ • Բուսահողի հեռացման հաստատում, թափոնների առաջացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակներ, կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքերի նորմատիվներ, ջրօգտագործման թույլտվություններ, համաձայնեցված ՇՄՆ կողմից, • Պայմանագրեր թափոնների և կեղտաջրերի	**<u>Կապալառու</u>** Ստանալ բոլոր համապատասխան լիցենզիաները, թույլտվությունները և համաձայնագրերը **<u>Ինժեներ</u>** Վերահսկել Կապալառուին և ստուգել փաստաթղթերի ամբողջականությունը	Ներառված է ընդհանուր շինարարության արժեքի մեջ

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		հեռացման/մշակման լիցենզավորված ընկերությունների հետ (ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների և կեղտաջրերի/ տիղմի և այլնի համար), • Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական պետական եզրակացություններ / ՇՄՆ և համայնքային իշխանությունների թույլ-տվություններ հողային հանույթի տեղադրման վայրերի, ասֆալտի և բետոնի գործարանների համար, որոնք ենթակա են ազգային ՇՄԱԳ-ի:		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ				
1.Կողմնորոշիչ և բնապահպանության գծով դասընթաց	Կապալառուի գործունեության անհամապատասխանությունը ԲԿՊ-ին հանգեցնում է շրջակա միջավայրի անբավարար վերահսկման և շրջակա միջավայրի վատթարացման	1. Կապալառուն վարձում է առողջապահության, անվտանգության և բնապահպանության մասնագետի(ների) (ԱԱԲ)՝ բնապահպանական հարցերն ու մեղմացնող միջոցառումները վերահսկելու համար 2. Շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության մասին ուսուցումներ ապահովել ամբողջ անձնակազմի համար (Մանրամասն տեղեկությունների համար ենթապլանները տե՛ս ստորև)	**<u>Կապալառու</u>** Ապահովել մասնագետ (ներ) և աշխատակազմի համար կազմակերպել դասընթացներ **<u>Ինժեներ</u>** Ապահովել մասնագետ (ներ) և աշխատակազմի համար կազմակերպել դասընթացներ: Մոնիտորինգի ենթարկել Կապալառուին, շինաշխատողներին, շրջակա միջավայրի պարամետրերը և արդյունքների մասին տեղեկացնել ՃԴ-ին **ՃԴ** Ներկայացնել անհամապատասխանության	**<u>Կապալառու</u>** Ներառված է ընդհանուր շինարարության արժեքի մեջ **<u>Ինժեներ</u>** Արժեքը ներառված է խորհրդատուի բյուջեի մեջ

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
			ծանուցումներ	
2. Աշխատանքային տեղամասի բոլոր շինարարական գործողությունները (ներառյալ՝ օտարման գոտու, հորատման կետերի, բեռնաթափման տեղամասերի, շինարական ճամբարների աշխատանքներ)	Շրջակա միջավայրի վատթարացում Պատճառած վնաս փոշուց, օդի աղտոտվածությունից, աղմուկից և թրթռումից Աշխատողների և համայնքի բնակիչների անվտանգության և առողջության համար վտանգներ	Մոբիլիզացիայի ժամանակահատվածում պատրաստել և ներկայացնել ՏԲԿՊ՝ ներառյալ հետևյալ բնապահպանական կառավարման ենթապլանները՝ 1. Աշխատողների առողջության և անվտանգության պլան 2. Հանրային լսումների և հաղորդակցության պլան 3. Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան 4. Հաղորդուղիների պահպանման և տեղափոխման պլան 5. Ֆիզիկական և մշակութային ռեսուրսների պահպանման պլան	**<u>Կապալառու</u>** Նախապատրաստել և իրականացնել **<u>Ինժեներ</u>** Դիտարկել, հաստատել և մոնիտորինգի ենթարկել գործընթացը **<u>ՃԴ</u>** Վերահսկել Կապալառուին և Ինժեներին	Այս պլանների արժեքները հաշվարկվում են ստորև մանրամասն նկարագրված յուրաքանչյուր շինարարական պլանի համարառանձին:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		6. Շրջակա միջավայրի պահպանության պլան 7. Շինարարական աշխատանքների ճամբարի պլան 8. Աշխատանքային տեղամասի կառավարման պլան (քարհանք և բացահանք, թափոնների կուտակման վայրերի, պայթեցման աշխատանքների տեղամասերի, բետոնի դոզավորման և ասֆալտի գործարանների համար) 9. Թունելների կառուցման տեղամասեր 10. Երթևեկության և մուտքի կառավարման պլան 11. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան 12. Թափոնների և նյութերի		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		հեռացման պլան 13. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան i) Ենթապլանները նույնպես պետք է իրականացնեն ՇՄԱԳ հաշվետվության, մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պահանջները:		
		1. Աշխատողների առողջության և անվտանգության մասնագիտական պլան		
3. Աշխատանքային տեղամասի բոլոր աշխատանքները	ԲԿՊ-ի մասին և ծրագրի համար կիրառելի բնապահպանական կանոնակարգերի մասին տեղեկության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման Աշխատողների, ճանապարհից օգտվողների և շինհրապարակին մոտ գտնվող	1. Աշխատանքների հիգիենայի և անվտանգության մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ դասընթացներ հետևյալ թեմաների շուրջ՝ • Ընդհանուր կանոններ և կանոնակարգեր՝ շինհրապարակում և	**<u>Կապալառու</u>** Իրականացնել պլանը և պատրաստել կողմնորոշման ծրագիր **<u>Ինժեներ</u>** Դիտարկել և հաստատել Կապալառուի մշակած պլանը: Աջակցել և վերահսկել իրականացման ընթացքը:	Ներառված է ընդհանուր շինարարության արժեքի մեջ

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
	այլ մարդկանց հիվանդություն, վնասվածք կամ մահ՝ վնասակար նյութերի կիրառման պատճառով, արտահոսք, սայթաքումներ, թափվող առարկաներ	ճամբարներում հետևելու համար: • Շինարարական աշխատանքների վերաբերյալ առանձնահատուկ կանոններ և կանոնակարգեր, ներառյալ՝ աշխատանքը կամուրջների վրա, թունելներում, էլեկտրական գործիքների հետ, փոսերի հորատում և այլն: • Ընդհանուր առողջապահության և անվտանգության մասին իրազեկման ծրագիր՝ շինարարության աշխատողներին ուսուցանելու համար սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և	Վերանայել պատահարների արձանագրությունները **ՃԴ** Վերանայել պլանը և աջակցել Ինժեներին	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: • Անօրինական թրաֆիքինգ. աշխատողները պետք իրազեկված լինեն, որ մարդկանց, վայրի բնության վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվելու, և կկիրառվի խստացվողտուգանքի սխեմա՝ ընդհուպ մինչևհեռացում: 2. Չեռնարկել նախազգուշացնող բոլոր թույլատրելի միջոցառումները (ժապավենով արգելափակում, հսկիչ-անցակետեր և այլն) ՝ չթույլատրված մուտքը դեպի շինհրապարակ կանխարգելելու համար		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		Պայթեցում. Ուսուցումը պետք է ներառի պայթեցման (եթե պայթեցումը նախատեսվում է) անվտանգության հայեցակետերի բաղադրիչ: Թեմաները պետք է ներառեն՝ ○ Հանրային հանդիպումներ՝ պայթեցման աշխատանքների ժամանակ անվտանգության հայեցակարգը ներկայացնելու նպատակով ○ Փակցված նշաններ, որոնք ցույց են տալիս պայթեցման աշխատանքների ժամերը ○ Ազդանշաններ պայթեցումից առաջ ○ Պայթեցման ներքնակների օգտագործում ○ Պայթուցիկ նյութերի պատշաճ գործածում և պահեստավորում		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		3. Շինհրապարակում բացառել վտանգ ներկայացնող գործելակերպը և բոլոր վտանգավոր գործիքները 4. Կրակմարիչի առկայություն, որը հեշտությամբ հասանելի է բոլոր գործածվող մեքենաների համար և շինհրապարակի բոլոր հատվածներում 5. Աշխատողների առողջության կանոնավոր բժշկական ստուգումներ. Կապալառուն կարող է վարձել կամ պայմանագիր կնքել պահանջվող բժշկական ոլորտի մասնագետների հետ 6. Հեշտությամբ հասանելի առաջին օգնության պարագաների առկայություն բոլոր գործածվող մեքենաներում և շինհրապարակի բոլոր հատվածներում 7. Եղանակին համապատասխան համազգեստ և այլ ԱՊՄ (PPE)		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		ապահովում աշխատողների և անձնակազմի մյուս անդամների համար: Խրախուսիչ միջոցների և տուգանքների կիրառում պաշտպանիչ հանդերձանքի (PPE) գործածությունն ապահովելու համար 8. Առողջությանն ու անվտանգությանը առնչվող պատահարների արձանագրում և անհրաժեշտության դեպքում զեկուցում վերահսկող ինժեներին և համապատասխան ղեկավար մարմիններին 9. Սահմանել եղանակային պայմանները, որոնց դեպքում շինարարական աշխատանքները պետք է դադարեցվեն և վերսկսվեն միայն թույլտվության դեպքում: 10. Թույլատրել ծխելը միայն հատուկ հատկացված վայրերում, որոնք հագեցած են		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		կրակմարիչներով/հրդեհային ավազով և ծխախոտի հեռացման անվտանգ տարաներով: 11. Ներդնել միջադեպերի, դժբախտ դեպքերի, վնասվածքների և միկրովնասվածքների գրանցման, հաղորդման և հետաքննության համակարգ: 12. Համոզվել, որ ազդանշանները տեղադրված են և աշխատում են բոլոր շինարարական մեքենաների վրա: 13. Արգելել մուտքը սահմանափակ տարածքներ, բացառությամբ հատուկ պատրաստվածություն ունեցող անձանց: 14. Համոզվել, որ բոլոր էլեկտրական սարքավորումները հարմար են ծանր շինարարական միջավայրերում օգտագործելու համար:		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		15. Պարբերաբար ստուգել էլեկտրական սարքավորումները և փոխարինել/վերանորոգել դրանք, եթե հայտնաբերվել է վնաս: 16. Միայն այն աշխատակիցները, ովքեր անցել են համապատասխան վերապատրաստում և ունեն վկայականներ, կարող են մուտք ունենալ բարձրավոլտ սարքավորանքի գոտի և/կամ կատարել էլեկտրական աշխատանքներ: 17. Համոզվել, որ էլեկտրամատակարարումն անջատված է և մեկուսացված՝ նախքան էլեկտրական համակարգերի հետ աշխատանքի թույլատրելը: 18. Ապահովել, որ բարձրության վրա բոլոր գործողությունները պլանավորվեն և վերահսկվեն համապատասխան որակավորում		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		ունեցող և փորձառու անձանց կողմից, որպեսզի նվազագույնի հասցնեն տեղում գտնվող անձանց ռիսկը և համակարգեն տեղանքի այլ գործողությունները: Սա պետք է ներառի միջոցառումներ՝ ամբարձիչ սարքավորումների և բեռների հետ վերգետնյա կոմունալ ծառայությունների և կառույցների շփումը խուսափելու համար: 19. Խոչընդոտել բարձրացող բեռների տակով մարդկանց անցուդարձը: 20. Համոզվել, որ բարձրացվող բոլոր բեռները պատշաճ կերպով կապված են: 21. Բոլոր ամբարձիչ սարքավորումների, ներառյալ բոլոր կեռները, ժապավենները, շղթաները և այլն, համար մշակել և իրականացնել ստուգման և փորձարկման ծրագիր:		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		22. Համոզվել, որ բոլոր վտանգավոր նյութերը պատշաճ կերպով պահվում են համապատասխան տարաներում և պիտակավորված են անվանումով և վտանգավոր հատկանիշներով: 23. Ապահովել հանգստի գոտիներ՝ ապահովված խմելու ջրով և կազմակերպել շոգ եղանակային պայմաններում աշխատանքը՝ տրամադրելով հանգստի ընդմիջումներ: 24. Գիշերային ժամերին ապահովել բավարար լուսավորություն շինհրապարակների ներսում և շրջակայքում: 25. Շինարարական մեքենաները պետք է պահպանեն համաձայնեցված մուտքի երթուղիները և շինարարական արագության սահմանաչափերը (5 կմ/ժ աշխատանքային		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		գոտիներում): 26. Հնարավորության դեպքում խուսափել տրանսպորտային միջոցի հետընթաց շարժման անհրաժեշտությունից: 27. Ապահովել առանձնացված երթուղիներ և տեղանքի մուտքեր (այսինքն՝ առանց տրանսպորտային միջոցների) հետիոտների համար: 28. Աղմուկից պաշտպանող ԱՊՄ-երը պետք է տրամադրվեն այն աշխատողներին, ովքեր աշխատում են այն տարածքներում, որտեղ աղմուկի մակարդակը 80 դԲ(Ա)-ից բարձր է, և հասանելի կլինի բոլոր աշխատողներին ըստ պահանջի՝ անկախ աղմուկի մակարդակից: Աղմուկի պաշտպանության ԱՊՄ-երը պետք է պարտադիր օգտագործվեն 85 դԲ(Ա) ավելի բարձր աղմուկի		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		դեպքում: ***Աշխատանք և աշխատանքային պայմաններ*** 1. Մշտապես ապահովել խմելու ջրի հուսալի և բավարար մատակարարումը: 2. Ստեղծել ճաշարաններ/հանգստի գոտիներ՝ լվացարաններով: 3. Բոլոր աշխատավայրերում աշխատողներին ապահովել զուգարանակոնքերով և լվացարաններով, կանանց համար՝ առանձին զուգարաններ: 4. Շինարարական ճամբարները համալրել բուժ.կետով, որը կսպասարկի բոլոր աշխատողներին: 5. Արգելել անչափահասների աշխատանքի, ներառյալ 18 տարեկանից ցածր աշխատողների		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		աշխատանքի հետ կապված ազգային օրենքներին և միջազգային չափանիշներին համապատասխանելը: 6. Հարկադիր աշխատանքի ցանկացած ձև արգելված է: 7. Աշխատանքը սկսելուց առաջ աշխատողներին տրամադրել իրենց պայմանագրի պատճենները, որոնք կներառեն հստակ և թափանցիկ տեղեկատվություն նրանց աշխատավարձի, նպաստների և աշխատանքային պայմանների վերաբերյալ (աշխատանքի ժամեր և արտաժամյա աշխատանք, տարեկան արձակուրդի իրավունքներ, կացարանի իրավունքներ և այլն): 8. Պարբերաբար անցկացնել բուժ. զննումներ համոզվելու համար, որ բոլոր աշխատողների առողջական		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		վիճակը թույլատրելի է ստանձնած աշխատանքը կատարելու համար: 9. Բոլոր աշխատողների հետ անցկացնել հրահանգավորում (ներառյալ ԲԱԱԱ-ի հետ կապված հարցերը), ինչպես նաև հատուկ ուսուցում, որը վերաբերում է նրանց մասնագիտական գործառույթներին՝ համաձայն Կապալառուի կողմից մշակված վերապատրաստման ծրագրի: ***Հանրային առողջություն և աշխատանքի անվտանգություն*** 1. Առաջնահերթություն տալ Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներում (և, մասնավորապես, տուժած գյուղերից) զբաղվածությունը՝ տեղական հավաքագրման արշավների միջոցով: 2. Կազմակերպել տեղեկատվական արշավներ Ծրագրի ազդեցության		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		տակ գտնվող համայնքներում՝ խթանելու կանանց դիմումը Ծրագրի տարբեր պաշտոններում: 3. Մշակել և իրականացնել վերապատրաստման ծրագիր՝ տեղական մարդկային ռեսուրսները Ծրագրի աշխատուժի կարիքներին համապատասխան վերապատրաստելու համար: 4. Առաջնահերթություն տալ Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներից ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը: 5. Կազմակերպել հատուկ դասընթացներ տեղական կին ձեռներեցների համար՝ ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու և ամրապնդելու նպատակով: 6. Ապահովել այլընտրանքային ժամանակավոր մուտք դեպի		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		հողամասեր և բնական ռեսուրսներ (արոտավայրեր, հողատարածքներ, բիզնեսներ, անտառներ և գետեր), որտեղ մուտքը ժամանակավորապես սահմանափակված է կլինի շինարարական աշխատանքների պատճառով: 7. Համոզվել, որ կապի տեղական պայմանավորվածությունները համահունչ են Երթևեկության կառավարման պլանին և Շահառուների ներգրավման պլանի պահանջներին: 8. Ապահովել Տարաբնակեցման պլանում չընդգրկված և մուտքի սահմանափակմամբ հողատարածքները ապահովել այլընտրանքային մշտական մուտքով: 9. Կազմակերպել լրացուցիչ անցումներ տնային կենդանիների		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		համար՝ երկարացնելով նախագծված հեղեղատարները կամ նախագծում ներառելով նոր անցումներ ազդակիր բնակավայրերի իգական և արա-կան սեռի բնակիչների առաջարկած վայրերում: 10. Տրամադրել վարորդների վերապատրաստման ծրագրեր՝ համոզվելու համար, որ կապալառուի և ենթակապալառուի անձնակազմը տեղյակ է համայնքի զգայունության, ինչպիսիք են տնային կենդանիների տեղաշարժի կոնկրետ ժամանակաշրջանի մասին և կենտրոնանալով լեռնային տեղանքում և վատ եղանակային պայմաններում մանևրելու, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում ձեռնարկվող գործուղությունների		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		վրա: 11. Ապահովել հետիոտների համար անվտանգ անցումներ՝ ներառյալ համապատասխան ազդանշանները և դրոշակակիրների օգտագործումը՝ երեխաների և ընտանիքների ներկայության մասին շինարարական երթևեկությանը զգուշացնելու համար: 12. Համոզվել, որ բոլոր շինարարական երթևեկությունը տեղի է ունենում ցերեկային ժամերին, որտեղ դա հնարավոր է: 13. Հնարավորին չափով խուսափել շինարարական մեքենաների տեղաշարժից ազդվող ճանապարհների պիկային երթևեկության ժամանակաշրջաններում (տոնական և առավոտյան և երեկոյան երթևեկության		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		պիկերին): 14. Տեղադրել հանրային անվտանգության վտանգի մասին տեղեկատվական վահանակներ և արտակարգ իրավիճակների կոնտակտային տվյալներ: 15. Սահմանել և հստակ նշել ժամանակավոր շրջանցումները տեղական մոտեցման ճանապարհների համար, որտեղ անհրաժեշտ է: 16. Ապահովել, որ հանրային վայրերում լուսավորությունը բավարար է և պահպանվում է, հատկապես գենդերային բռնության և գիշերային ժամերին շինարարության և ճանապարհային անվտանգության ռիսկերը նվազեցնելու համար: 17. Ապահովել համապատասխան անվտանգության միջոցներ՝ վտանգավոր աշխատանքային		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		տեղամասեր չարտոնված մուտքը կանխելու համար, ներառյալ 1 մ-ից ավելի խորությամբ պեղումների բոլոր տարածքների ցանկապատումը: 18. Տեղական հիվանդանոցների հետ կապ սահմանել՝ վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքում ժամանակին իրազեկումներ ստանալու համար: 19. Ձեռնարկել անվտանգության բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ կանխելու վտանգավոր նյութերի և Ծրագրի տրանսպորտային միջոցների/սարքավորումների գողությունը կամ չարտոնված օգտագործումը՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան կողպեքներ և/կամ փակվող փականներ:		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		20.Ապահովել ջրելու կամ փոշու ճնշման ավելի արդյունավետ միջոցներ, ինչպիսիք են քիմիական կապակցիչները, այս զգայուն վայրերում՝ գարնան և ամառվա չոր օրերին ճանապարհային փոշու արտանետումները վերահսկելու համար:		
		2. Հանրային լսումների և հաղորդակցության պլան		
6. Հանրային լումներ, իրազեկման մակարդակի բարձրացում և բողոքներ	Համայնքների կամ ազդեցության ենթակա կողմերի՝ պլանավորված աշխատանքների և իրականացման ժամանակացույցի մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել հիասթափության և դժգոհությունների, ինչն իր հերթին կարող է ծրագրի համար ուշացումների	1. Մշակել դիմումի ձև՝ հանրության բողոքների և առաջարկությունների համար ու ստանալ **Ինժեների** հաստատումը: 2. Հանրության համար տեղադրել ցուցանակներ կամ ծրագրի մասին տեղեկատվական ցուցատախտակներ, որոնք կներառեն համապատասխան տեղեկատվություն տեղամասային	**Կապալառու** Պատրաստել և իրականացնել պլանը Կապալառուի կողմից վարձված առողջապահության և անվտանգության մասնագետը իրականացնում է պլանի իրազեկման և բողոքների լուծման ծրագիրը **Ինժեներ**	Ներառված է ընդհանուր շինարարության արժեքի մեջ

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
	պատճառ դառնալ	գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի վերաբերյալ, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները և այլն 3. Ազդեցության ենթարկված անձանց համար տեղամասային գրասենյակում կամ ցանկացած այլ հասանելի վայրում պահել բողոքների գրանցման մատյան 4. Վարել ստացված բողոքների մատյան (անունը, խնդրի նկարագրությունը, մուտքային ամսաթիվը, արձագանքման ամսաթիվը, հետագա հսկողության գործողությունը և լուծման կարգավիճակը)	Դիտարկելել և հաստատել Կապալառուի կողմից մշակված պլանը: Մոնիտորինգի ենթարկել լ իրականացման գործընթացը **ՃԴ** Վերահսկել **Ինժեներին**:	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		5. Հանրության և ազդեցության ենթարկված անձանց կողմից բարձրացված հարցերով զբաղվելու համար նշանակել պատասխանատու անձնակազմ 6. Կազմակերպել կանոնավոր հանդիպումներ համայնքի անդամների հետ նոր առաջացած հարցերը քննարկելու համար, եթե այդպիսիք կան 7. Համոզվել, որ ստացված բողոքներն և առաջարկությունները՝ **Ինժեներին** արագ փոխանցելու մեխանիզմը գործում է: Բողոքների լուծման մեխանիզմը մանրամասնորեն նկարագրված է ՇՄԱԳ հաշվետվության Բաժին 8-ում		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		3. Ֆլորայի և Ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան		
7. Հողային աշխատանքներ և այլ շինարարական աշխատանքներ	Ֆլորայի և ֆաունայի բնական միջավայրի խաթարումը և քայքայումը, հատկապես Կարմիր գրքի տեսակների Ֆաունայի բնական միջվայրի համար վնասակար է բուսականությա ն մաքրումը	1. Նախաձեռնել հետազոտություն՝ բացահայտելու համար բոլոր ծառերը և թփերը, որոնք տեղակայված են շինհրապարակի մոտ և կարող են վտանգվել շինարարության աշխատանքների հետևանքով 2. Տեղում իրականացվող միջոցառումներ՝ ծառերը և թփերը պահպանելու համար, որոնք կարող են ենթարկվել ազդեցության (աշխատողների համար դրանք հեշտ ճանաչելի դարձնել, երթևեկության տեղաշարժի կանոնակարգում, թափոնների հեռացում և այլն)	**<u>Կապալառու</u>** Պատրաստել և իրականացնել պլանը Վարձել ֆաունայի և ֆլորայի տեղացի փորձագետ, Կարմիր գրքի տեսակների տարածվածությունը ծրագրի տարածքում գնահատելու այդ տեսակների պահպանության նպատակով ազդեցությունը նվազեցնելու վերաբերյալ, առաջարկություններ ներկայացնելու և դրանց արդյունքները մոնիտորինգի ենթարկելու համար: արդյունքները: Մասնագետը պատրաստելու է ծառատունկի կամ դրանց տեղափոխման նախագիծը՝ անտառային	Ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		3. Ծանուցել Ինժեներին և համապատասխան կազմակերպություններին և ստանալ հաստատումներ, նախքան օտարման գոտու մաքրման աշխատանքների սկսելը (ծառերի և թփերի հատում) 4. Բուսականության հատման և մաքրման աշխատանքները խստագույնս իրականացնել՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի: 5. Դադարեցնել աշխատանքներն այն տարածքներում, որտեղ հանդիպել են անհայտ տեսակներ և պարզել՝ արդյոք դրանք Կարմիր գրքում գրանցված, հազվագյուտ կամ վտանգված տեսակներ են	տնտեսության ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում **Ինժեներ** Դիտարկել և հաստատել Կապալառուի կողմից մշակված պլանը և մոնիտորինգի ենթարկել իրականացման գործընթացը Արդյունքները ներկայացնել ամսական կտրվածքով **ՃԴ** Վերահսկել Ինժեներին	

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		Աշխատանքային ճամբարներում փակցնել պաստառներ, որոնք ներկայացնում են Կարմիր գրքի տեսակները, որոնք հավանական է, որ կհայտաբերվեն ծրագրի տարբեր տարածքներում Մշակել խստացվող տուգանքի պլան, որսորդությունը և վայրի բնության օգտագործումը կանխարգելելու համար 6. Հազվագյուտ տեսակների հայտնաբերման դեպքում հետագա գործողությունների նպատակով տեղեկացնել Ինժեների բնապահպանության մասնագետին 7. Վիրավոր կենդանիո գտնելու դեպքում տեղեկացնել Ինժեներին 8. Բուսականության հեռացումը և շինհրապարակի մաքրումը		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		նախաձեռնել, ուշ աշնանը կամ/և ձմռանը 9. Ստեղծել ծառերի և թփերի հատման գրանցմատյան, որը պետք է հասանելի լինի դիտարկման համար 10. Բուսականության մաքրման նպատակրով օգտագործել միայն այն թունաքիմիկատները, որոնք ընդգրկված չեն Կառավարության 2005թ. մարտի 17 N 293 որոշման մեջ և բացառել կայուն օրգանական աղտոտիչներ պարունակող քիմիական նյութերի օգտագործումը 11. Ստուգել և համոզվել, որ աշխատողներն օգտագործում են պաշտպանիչ հանդերձանքը (PPE), երբ կիրառում են		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		թունաքիմիկատներ կամ բուսականության մաքրման համար այլ քիմիական նյութեր 12. Փոխադրել հատված բուսականությունը թափոնների համար սահմանված կուտակավայր 2 օրվա ընթացքում 13. Հատված բուսականությունը ժամանակավորապես կուտակել ծրագրի օտարման գոտում սահմանված վայրում նախքան աղբավայր տեղափոխելը 14. Հատված բուսականությունը չպետք է այրվի 15. Ֆաունայի պաշտպանության համար պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները. **Անողնաշարավորներ.**		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		• Անողնաշարավորների ֆաունայի բազմազանության հետագա կարգավիճակը պահանջում է հետագա շարունակական մոնիտորինգ: **Երկկենցաղներ և սողուններ.** • Շինարարության ընթացքում, որտեղ մեծ թվով տեսակներ են հավաքված, մասնագետը պետք է հավաքի առանձնյակները և ազատ արձակի առավելհամապատասխան և անվտանգ տարածություններում: Տեսակները պետք է հավաքվեն նախքան ծանր շինարարական մեքենաների գործարկելը: • Ճանապարհի որոշ մասերում ապահովել (ճշգրիտ տեղերը պետք է որոշվեն) ստորգետնյա		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		անցուղիներ և արգելապատնեշներ: **Թռչուններ.** • Ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ, հարկ եղած դեպքում, կենդանիների միգրացիայի ուղիների վրա պետք է տեղադրել հատուկ ցանկապատեր՝ որպես կանոն հագեցած հատուկ վախեցնող սարքերով (արտացոլիչներով, ազդանշանային լույսերով, ձայնային ազդակներով և այլն):		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		• Շինարարական աշխատանքների պլանների օրացույցը մշակելիս պետք է հաշվի առնել աշխատանքների կասեցման անհրաժեշտությունը, քանի որ աշխատանքի ինտենսիվ ֆիզիկական գործոնները (աղմուկ, թրթռում, լուսային էֆեկտները և այլն) բացասաբար են ազդում կենդանիների կենսաբանական ակտիվ որոշակի ժամանակահատվածներում, ինչպիսիք են		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		կտղուցականչը, թխսումը և բնակալումը (գրաֆիկ կազմելիս, անհրաժեշտության դեպքում, հարկավոր է խորհրդակցել փորձագետների հետ): Այդ իսկ պատճառով անտառածածկ վայրերի հատման աշխատանքները պետք է անցկացվեն ձմռան ամիսներին: • Անհրաժեշտ է աշխատանքների ընթացքում աշխատակիցների կողմից		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		հայտնաբերված բները (թուխսով և/կամ ճտերով) մասնագետների հետ խորհրդակցելուց հետո տեղափոխել այլ՝ տվյալ տեսակին բնորոշ բնակատեղ։ **Կաթնասուններ.** • Շինարարական աշխատանքների ընթացքում մասնագետը պետք է տեղափոխի կենդանիներին • Տրամադրել անցուղիներ մանր կաթնասունների համար մայրուղու երկայնքով (Սիսիան - Դարբաս, Դարբաս – Շենաթաղ, Կիցք - Գեղի) նրանց տալով հնարավորություն՝ անվտանգ անցնել ճանապարհը:		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
		• Մայրուղին պետք է եզերված լինի պատնեշով՝ կենդանիների մուտքը դեպի ճանապարհ կանխելու համար: Հատուկ միջոցառումներ, ինչպիսիք են «Կանաչ կամուրջները», մեծ չափսերի վերգետնյա անցումները և այլն, պետք է ապահովվեն Կիցք-Գեղի հատվածում, քանի որ այնտեղ բնակվում է վտանգված խոշոր կաթնասունների մեծ բազմազանություն: Այդ նպատակով պետք է տարածքում իրականացվի մանրամասն հետազոտություն մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը՝ հայկական մուֆլոնների և բեզոարյան այծերի միգրացիայի ուղիները հայտնաբերելու համար:		
		4. Հաղորդուղիների պահպանման և տեղափոխման պլան		

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ Տրանշ 4. Սիսիան- Քաջարան 60 կմ ճանապարհային հատված				
Աշխատանքներ ծրագրի շրջանակներում	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառման ինդիկատիվ արժեքը (ԱՄՆ դոլար)
Մ. Թևոսյանը հավելեց, որ հանույթի զգալի մասը օգտագործվելու է ճանապարհի շինարարության ընթացքում:

Ե. Դիլանյանը, շարունակելով իր կարծիքը, մանրամասն ներկայացրեց համայնքային հողերի օտարման գործընթացը և պատասխանեց բոլոր հնչած հարցերին:

Ակնհայտ բնականոն գրունտային ջրերի, հանվող հանույթի, ժխտական ազդեցությունների մեղմացման փուլի, ինչպես նաև տարածքի հետագա բարեկարգման վերաբերյալ հարցերը:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Կ. Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու
Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կ. Հովհաննիսյան

Ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Ա. Եսայանրյան

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից կազմակերպված «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների (երկրորդ քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

22, Սյունիքի մարզ, ք. Սիսիան 22.06.2023

Անուն Ազգանուն	Կազմակերպություն կամ բնակության վայրը	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
[illegible]	[illegible]	094134237	[illegible]
[illegible]	[illegible]	035 111287	[illegible]
[illegible]	[illegible]	053869808	[illegible]
[illegible]	[illegible] ՍՊԸ	055606780	[illegible]
[illegible]	[illegible] ՍՊԸ	0983445 33	[illegible]
[illegible]	[illegible]	098040557	[illegible]
[illegible]	[illegible]	093[illegible]3949	[illegible]
[illegible]	[illegible]	077626275	[illegible]
[illegible]	[illegible]	093008688	[illegible]
[illegible]	[illegible]	077-880-661	[illegible]
[illegible]	[illegible]	098 688606	[illegible]
[illegible]	[illegible]	093435317	[illegible]
[illegible]	[illegible]	093 60 60 78	[illegible]
[illegible]	[illegible]	077-17-4818	[illegible]
[illegible]	[illegible]	093 20 5998	[illegible]

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից կազմակերպված «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների (երկրորդ քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Սիսիան 22.06.2023

Անուն Ազգանուն	Կազմակերպություն կամ բնակության վայրը	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
[illegible]	[illegible]	093341389	[signature]
[illegible]	[illegible]	093111537	[signature]
[illegible]	[illegible]	094080600	[signature]

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

15.08.2023, գ. Դարբաս





ՀՀ Սյունիքի Մարզ, գ. Դարբաս *15.08.2023թ.*

Սույն թվականի օգոստոսի 15-ին ժամը 16:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (երրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին՝ Դարբաս, Շենաթաղ, Շամբ և այլ հարակից բնակավայրերի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ ՃԴ), Ջեռնարկողի՝ «Քոնսեկորադ» ՍՊԸ ներկայացուցիչները և բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար Գեղամ Օհանյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա լինելու համար, նշեց, որ այսօր անց են կացվելու Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երրորդ հանրային քննարկումները և խոսքը փոխանցեց Ճանապարհային դեպարտամենտի ներկայացուցիչ, Ծրագրի ղեկավար Արթուր Սանոյանին:

Ա. Սանոյանը ներկայացավ, հակիրճ ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը և կարևորեց այն հանգամանքը, որ նրանք միշտ պատրաստ են ընդունել, քննարկել և հաշվի առնել շահագրգիռ կողմերի, ազդակիր անձանց և բնակիչների առաջարկությունները և դիտողությունները թե՛ այս, և թե՛ հետագա փուլերում:

Ներկաները խնդրեցին ավելի մանրամասն ներկայացնել նախատեսված ճանապարհային հանգույցների, թունելների և կամուրջների տեղադիրքերը և տեխնիկական բնութագրերը:

Ա. Սանոյանը տրամադրեց համապատասխան տեղեկատվություն ապա ներկաների ուշադրությանը ներկայացրեց տեսահոլովակ (3D ձևաչափի), որտեղ մանրամասն նկարագրված էր ներկայացվող ճանապարհահատվածի նկարագրությունը (ներառյալ ճանապարհային հանգույցների, թունելների և կամուրջների տեղադիրքերը և տեխնիկական բնութագրերը): Նա նաև մանրամասն ներկայացրեց Բարգուշատի թունելի համար նախատեսված ապաստարանային և հակահրդեհային համակարգերի նկարագիրը:

Բնակիչներից մեկը հարցրեց, արդյո՞ք ճանապարհը վճարովի է լինելու:

Ա. Սանոյանը պատասխանեց, որ այս պահի դրությամբ ճանապարհը նախատեսված է անվճար և այլ քննարկումներ այդ հարցի վերաբերյալ դեռևս չեն իրականացվել:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՌԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Ա. Սաոնյանի խոսքը շարունակեց Ջեռնարկողի ներկայացուցիչ Միքայել Թևոսյանը: Նա ներկայացրեց բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները, նշեց, որ այդ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է նաև ՇՄԱԳ հաշվետվությունում, որը էլեկտրոնային տարբերակով տրամադրվել է համայնքներին: Նա նաև ներկայացրեց բողոքների լուծման մեխանիզմը, ինչը թույլ կտա ազդակիր անձանց/բնակիչներին իրենց դիմումները արդյունավետ հասցեագրել Ծրագրի իրականացման ընթացքում և ստանալ համապատասխան աջակցություն:

Մ. Թևոսյանը նաև ներկաներին ցույց տվեց կանաչ կամուրջների օրինակներ նշելով, որ սույն Ծրագրի իրականացման ընթացքում նման միջոցառումներ նույնպես նախատեսված են: Նա հավելեց, որ բնակիչներին հասանելի է լինելու ցանկացած տեղեկատվություն գործընթացի ցանկացած փուլում և բնակիչներն ազատ են հիմնավորված դիտողություններ և/կամ առաջարկություններ ներկայացնելու:

Ներկաներից մեկը հարցրեց, թե արդյո՞ք իրակացվելու են օդի որակի և այլ պարամետրերի գործիքային չափումներ:

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ ելակետային իրավիճակի գնահատման համար համապատասխան չափումներ իրականացվել են թե՛ նախկինում, թե՛ վերջերս, ինչպես նաև շինարարության ընթացքում նույնպես նախատեսված են չափումներ զգայուն ընկալիչների մոտ:

Բնակիչները հետաքրքրվեցին, թե արդյո՞ք Ծրագրի մրցույթը հայտարարվելու է մինչև հողերի օտարումը:

Ա. Սանոյանը նշեց, որ հողերի օտարման և մրցույթի իրականացման գործընթացներն իրականացվելու են զուգահեռ: Նա նաև մանրամասն ներկայացրեց հողերի օտարման գործընթացի հետ կապված հարցերը և բարդությունները և նշեց, որ այդ գործընթացի ընթացքում նույնպես նրանք պատրաստ են աջակցել բնակիչներին:


Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գ. Օհանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու՝
Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար Գ. Օհանյան

Ջեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Ա. Խաչատրյան


CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ



Հանրային քննարկումների պատասխանատու
Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար — Գ. Օհանյան

Շեռնարկողի ներկայացուցիչ — Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց — Ա. Խաչատրյան



«Հյուսիս-հարավ մանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Տրանշ 4, Սիսիան-Քաջարան 60կմ մանապարհային հատվածի շինարարության և գործարկման փուլերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերի (նախագծի) հրապարակային քննարկում

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Սյունիքի մարզ, գյուղ Դարբաս — 15.08.2023

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպության կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	

16.08.2023, գ. Գեղի





ՀՀ Սյունիքի Մարզ, գ. Գեղի *16.08.2023թ.*

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Սույն թվականի օգոստոսի 16-ին ժամը 10.00-ին ՀՀ Սյունիքի մարզի Գեղի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (երրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին՝ Քաջարան խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալը, Քաջարանի համայնքապետարանի, Գեղի բնակավայրի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ ՃԴ), Ձեռնարկողի՝ «Քոնսեկորադ» ՍՊԸ ներկայացուցիչները և բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը)։

Բացման խոսքն ասաց Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչ, համայնքի ղեկավարի տեղակալ Ջոհրապ Առաքելյանը։ Նա շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, նշեց, որ այսօր անց են կացվելու Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երրորդ հանրային քննարկումները և խոսքը փոխանցեց «Ճանապարհային դեպարտամենտ»-ի ներկայացուցիչ Արթուր Սանոյանին։

Ա. Սանոյանը ներկայացավ, հակիրճ ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը և կարևորեց այն հանգամանքը, որ նրանք միշտ պատրաստ են ընդունել, քննարկել և հաշվի առնել շահագրգիռ կողմերի, ազդակիր անձանց և բնակիչների առաջարկությունները և դիտողությունները թե՛ այս, և թե՛ հետագա փուլերում։

Քաղաքաշինության բաժնի պետ Վահագն Ստեփանյանը հետաքրքրվեց, թե ի՞նչ ելքեր, մուտքեր և երկրորդային ճանապարհներ են նախատեսված հատկապես Գեղի բնակավայրի տարածքում։

Ա. Սանոյանը տրամադրեց համապատասպան տեղեկատվություն ապա ներկաների ուշադրությանը ներկայացրեց տեսահոլովակ (3D ձևաչափի), որտեղ մանրամասն նկարագրված էր ներկայացվող ճանապարհահատվածի նկարագրությունը (ներառյալ ճանապարհային հանգույցների, թունելների և

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՌԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

կամուրջների տեղադիրքերը և տեխնիկական բնութագրերը)։ Նա նաև մանրամասն ներկայացրեց Բարգուշատի թունելի համար նախատեսված ապաստարանային և հակահրդեհային համակարգերի նկարագիրը։

Զ. Առաքելյանը հարցրեց, արդյո՞ք հնարավոր է դեպի Գեղի բնակավայր մոտեցնող ճանապարհի կառուցելու տարբերակ դիտարկել։

Ա. Սանոյանը նշեց, որ այս փուլում թերևս լուծում տրված չէ, բայց այդ հարցը հաշվի է առնվել և շինարարության փուլում հնրավոր կլինի մշակել օպտիմալ տարբերակ։

Բնակիչներից մեկն ասաց, որ նշված տարածքի որոշ հատվածներում հնարավոր է լինի օգտակար հանածոների պարունակություն։

Ա. Սանոյանը պատասխանեց, որ տարածքում իրականացվում են երկրաբանական ուսումնասիրություններ և ցանկացած բացահայտման դեպքում կմշակվեն համապատասխան միջոցառումներ։

Վ. Ստեփանյանը հարցրեց, թե արդյո՞ք լինելու է ճանապարհային հանգույց Ողջի և Գեղի գետերի հատման հատվածում։

Ա. Սանոյանը պատասխանեց, որ հարավային հատվածում նախատեսված է մեկ ճանապարհային հանգույց Լեռնաձոր բնակավայրի մոտ, ինչը պայմանավորված է տեղանքի բարդ լանդշաֆտով։ Նա նաև հավելեց, որ նախատեսվող ճանապարհն ամբողջությամբ նոր ճանապարհ է լինելու և համայնքային գոյություն ունեցող որևէ ճանապարհի չի փակվելու։

Բնակիչները հետաքրքրվեցին, թե ինչպե՞ս է իրականացվելու հանույթի տեղափոխման հարցը։

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ հաշվետվության կառավարման պլանում կա հստակ պահանջ, թե ինչպես պետք է Կապալառուն կազմակերպի հանույթի տեղափոխման գործընթացը և կարևորեց այն փաստը, որ այդ գործընթացը պետք է գրավոր կերպով համաձայնեցված լինի համայնքի հետ։

Շարունակելով խոսքը Մ. Թևոսյանը ներկայացրեց բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները, նշեց, որ այդ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է նաև ՇՄԱԳ հաշվետվությունում, որը էլեկտրոնային տարբերակով տրամադրվել է համայնքներին։ Նա նաև ներկայացրեց բողոքների լուծման մեխանիզմը, ինչը թույլ կտա ազդակիր անձանց/բնակիչներին իրենց

դիմումները արդյունավետ հասցեագրել Ծրագրի իրականացման ընթացքում և ստանալ համապատասխան աջակցություն:

Մ. Թևոսյանը նաև ներկաներին ցույց տվեց կանաչ կամուրջների օրինակներ նշելով, որ սույն Ծրագրի իրականացման ընթացքում նման միջոցառումներ նույնպես նախատեսված են: Նա հավելեց, որ բնակիչներին հասանելի է լինելու ցանկացած տեղեկատվություն գործընթացի ցանկացած փուլում և բնակիչներն ազատ են հիմնավորված դիտողություններ և/կամ առաջարկություններ ներկայացնելու:

Գեղի բնակավայրի վարչական ղեկավար Վասիլ Գրիգորյանը հարցրեց, արդյո՞ք շինարարության ընթացքում ճանապարհի կողքի հողակտորները ևս ենթարկվելու են ազդեցության:

Ա. Սանոյանը պատասխանց, որ նախագծում հստակ նշված է գործունեության օտարման գոտին և դրանից դուրս որևէ ազդեցություն չի նախատեսվում:

Մ. Թևոսյանն հավելեց, շինարարական աշխատանքների ընթացքում կազմակերպությունն ունենում է աշխատակից, որը համագործակցում է համայնքի և բնակիչների հետ՝ առաջացած խնդիրների լուծման նպատակով:

Վ. Գրիգորյանը նշեց, որ կան բնակելի տներ, որոնց մի մասը մնում է կառուցվող կամուրջների տակ:

Ա. Սանոյանը պատասխանեց, որ կամուրջների տակ ընկնող տարածքները ամբողջությամբ օտարվելու են:

Բնակիչներից մեկը հարցրեց, թե ե՞րբ են նախատեսվում սկսել շինարարական աշխատանքները:

Ա. Սանոյանը պատասխանեց, որ նախնական տվյալներով 2024 թվականի գարնանը:

Վ. Գրիգորյանը հետաքրքրվեց շինարարության ընթացքում հնարավոր կառուցվող ժամանակավոր շինությունների վերաբերյալ:

Ա. Սանոյանը նշեց, որ շինարարության ընթացքում Կապալառուն սերտ համագործակցելու է համայնքների հետ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Զ. Առաքելյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Հանրային քննարկումների պատասխանատու
Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ Զ. Առաքելյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Գ. Գաբրիելյան

Մ. Թևոսյանը նաև ներկաներին ցույց տվեց կանաչ կամուրջների օրինակներ նշելով, որ սույն Ծրագրի իրականացման ընթացքում նման միջոցառումներ նույնպես նախատեսված են: Նա հավելեց, որ բնակիչներին հասանելի է լինելու ցանկացած տեղեկատվություն գործընթացի ցանկացած փուլում և բնակիչներն ազատ են հիմնավորված դիտողություններ և/կամ առաջարկություններ ներկայացնելու:

Գեղի բնակավայրի վարչական դեկավար Վասիլ Գրիգորյանը հարցրեց, արդյո՞ք շինարարության ընթացքում ճանապարհի կողքի հողակտորները ևս ենթարկվելու են ազդեցության:

Ա. Սանոյանը պատասխանց, որ նախագծում հստակ նշված է գործունեության օտարման գոտին և դրանից դուրս որևէ ազդեցություն չի նախատեսվում:

Մ. Թևոսյանն հավելեց, շինարարական աշխատանքների ընթացքում կազմակերպությունն ունենում է աշխատակից, որը համագործակցում է համայնքի և բնակիչների հետ՝ առաջացած խնդիրների լուծման նպատակով:

Վ. Գրիգորյանը նշեց, որ կան բնակելի տներ, որոնց մի մասը մնում է կառուցվող կամուրջների տակ:

Ա. Սանոյանը պատասխանեց, որ կամուրջների տակ ընկնող տարածքները ամբողջությամբ օտարվելու են:

Բնակիչներից մեկը հարցրեց, թե ե՞րբ են նախատեսվում սկսել շինարարական աշխատանքները:

Ա. Սանոյանը պատասխանեց, որ նախնական տվյալներով 2024 թվականի գարնանը:

Վ. Գրիգորյանը հետաքրքրվեց շինարարության ընթացքում հնարավոր կառուցվող ժամանակավոր շինությունների վերաբերյալ:

Ա. Սանոյանը նշեց, որ շինարարության ընթացքում Կապալառուն սերտ համագործակցելու է համայնքների հետ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Զ. Առաքելյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու,
Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ Զ. Առաքելյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Գ. Գաբրիելյան

3

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ընդհանուր նշանակության» հիմնադրամի կողմից կատարվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր. Տրանշ 4, Սիսիան- Քաջարան ճանապարհահատվածի ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության բարձրացման և փոխաբերնական գործընթացի շրջանակ միջավայրի վրա ազդեցության հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (երկրորդ քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Սյունիքի մարզ, գյուղ Գեղի 16.08.2023

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպության կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
[illegible]	[illegible]	093 13 42 32	[illegible]
[illegible]	[illegible]	094-59-78-48	[illegible]
[illegible]	[illegible]	094 22 22 27	[illegible]
[illegible]	[illegible]	098 33 00 23	[illegible]
[illegible]	[illegible]	098.55 10 57	[illegible]
[illegible]	[illegible]	094/65 45 59	[illegible]
[illegible]	[illegible]	093 90 20 34	[illegible]
[illegible]	[illegible]	093 20 24 59	[illegible]
[illegible]	[illegible]	094 65 70 56	[illegible]
[illegible]	[illegible]	077 22 12 04	[illegible]

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային ցանցի զարգացման ներդրումային ծրագիր» ներդրումային կրեդիտի շրջանակներում իրականացվող «Դրանիս-Կարտիկ ճանապարհային հատվածի վերակառուցման և վերջնամշակման գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մոնիթորինգի ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության քննարկման վերաբերյալ հանրային քննարկումների (հերթական) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Սյունիքի մարզ, գյուղ Գեղի 16.08.2023

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպության կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
Ա[illegible]	[illegible]	093920196	
[illegible]	[illegible]	098601977	
[illegible]	[illegible]	098604406 44	
[illegible]	[illegible]	077193299	
[illegible]	[illegible]	098330324	
[illegible]	[illegible]	077501056	
[illegible]	[illegible]	077500659	
[illegible]	[illegible]	093 78 18 62	
[illegible]	[illegible]	098159013	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՆԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից կազմակերպված «Հյուսիս- հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի, Տրանշ 4, Սիսիան- Քաջարան ճանապարհահատվածի ներդրումային ծրագրի ՇՄՍԳ հաշվետվության թարմացման և փոխաբերնախան գործընթացի շրջանակ միջամտության վերաբերյալ հանրային քննարկումների (հրապարակ) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Սյունիքի մարզ, գյուղ Գեղի

16.08.2023

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպություն կամ բնակության վայր / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
Գայանե Գրիգորի	Գեղի համայնք	093222626	
Միհրան Հովհ	Գեղի համայնք	093999737	
Արթուր Հովհ	ՏՄԳ Հ.	055111537	
Կամո Հայրապետ	Գեղի համայնք	093445333	
Միհրան Գրիգ	Գեղի համայնք	055406180	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

02.11.2023, գ. Գեղի





ՀՀ Սյունիքի մարզ, գ. Գեղի *02.11.2023թ.*

Սույն թվականի նոյեմբերի 2-ին ժամը 16:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան խոշորացված համայնքի Գեղի բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (չորրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին՝ Քաջարան խոշորացված համայնքի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետը, Գեղի բնակավայրի վարչական ղեկավարը, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ ՃԴ), ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/, Ձեռնարկողի՝ «Քոնսեկորադ» ՍՊԸ ներկայացուցիչները և բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչ, համայնքի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ Գ. Գաբրիելյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, նշեց, որ այսօր անց են կացվելու Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ չորրորդ հանրային քննարկումները և խոսքը փոխանցեց Ձեռնարկողի ներկայացուցիչ Միքայել Թևոսյանին:

Մ. Թևոսյանը ներկայացրեց հանրային քննարկմանը ներկա մասնագետների թիմը, Ծրագրի ընդհանուր բնութագիրը և օրենքով սահմնված ընթացակարգերը և նշեց, որ այժմ անց են կացվում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական փուլի վերջին (չորրորդ) հանրային քննարկումները: Այնուհետև Մ. Թևոսյանը խոսքը փոխանցեց ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հերիքնազ Մկրտչյանին:

Հ. Մկրտչյանը ներկայացավ, նշեց, որ 2018 թվականին սույն Ծրագրի շրջանակներում իրականցվել է ՇՄԱԳ գործընթացը, բայց հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքներ չիրականացնելու դեպքում Ծրագրի ՇՄԱԳ գործընթացը պետք է իրականացնել կրկին:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՌԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Նա նշեց, որ այժմ, սույն Ծրագրի շրջանակներում իրականացվում է արդեն չորրորդ հանրային քննարկումը՝ նախորդ ՇՄԱԳ հաշվետվության թարմացման նպատակով: Հ. Մկրտչյանը մանրամասն ներկայացրեց մինչ հանրային քննարկումները կատարված աշխատանքները, ներառյալ՝ կատարված ուսումնասիրությունները, ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայցված տեղեկատվությունը, ինչպես նաև ՊՈՒԱԿ-ի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները: Նա կարևորեց այն հանգամանքը, որ եթե համայնքների ներկայացուցիչների կողմից կլինեն դիտողություններ և/կամ առաջարկություններ, ապա հնարավորության դեպքում, դրանք հաշվի կառնվեն:

Մ. Թևոսյանը հավելեց, որ ներկայացվող Ծրագրի վերաբերյալ բազմիցս քննարկումներ են եղել, դրանց ընթացքում հնչեցված առաջարկությունները/կարծիքները հաշվի են առնվել և կատարված աշխատանքների մանրամասները ներկայացվել են ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

Գեղի բնակավայրի բնակիչ Ա. Գրիգորյանը հետաքրքրվեց, թե ինչպիսի մեխանիզմներ են գործարկվելու վնասվող անտառային տարածքների վերականգնման համար և ինչ տարածքներում է իրականացվելու նախատեսվող ծառատունկը:

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ ըստ ՇՄԱԳ հաշվետվության յուրաքանչյուր կտրված ծառի փոխարեն նախատեսվում է տնկել 6 նոր ծառ, իսկ տեղանքի ընտրությունը իրականացվելու է շինարարական փուլի ընթացքում Կապալառուի կողմից հիմնվելով այն նորմերի և միջազգային պայմանագրերի վրա, որոնք արդյունավետ կիրառվում են «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի այլ հատվածներում:

Հ. Մկրտչյանը հավելեց, որ դա պարտադիր կատարման ենթակա գործունեություն է, որը իրականացվելու է շրջակա միջավայրի նախարարության համապատասխան կառույցի հետ համատեղ (ծառերի հատման և տնկման աշխատանքները, տեղանքի ընտրությունը, ծառաթփային բուսականության տեսակների ընտրությունը և այլն):

ՃԴ ներկայացուցիչ Ինեսա Զարգարյանը հավելեց, որ ներկայացվող գործունեությունը իրականացվելու է նաև ազդակիր համայնքի հետ համատեղ:

Մ. Թևոսյանը նաև հավելեց, որ բացի տնկումից, Կապալառուի պարտականությունների մեջ ներառված է վերատնկած ծառերի խնամքը առնվազն մեկ տարի ժամկետով և ծառերի 80% կպչողականությամբ:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Գեղի բնակավայրի բնակիչ Ն. Խաչատրյանը հարցրեց, թե արդյո՞ք շինարարության ընթացքում լինելու են պայթեցման աշխատանքներ:

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ պայթեցման աշխատանքների իրականցումը նույնպես հստակեցվելու է շինարարության փուլում: Նա նշեց, որ պայթեցման աշխատանքներ իրականացնելուց առաջ կատարվելու են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, որոնք ենթադրում են՝ մեթոդոլոգիայի մշակում և ներկայացում, համայնքի և բնակիչների իրազեկում, նախարարության կողմից թույլտվության ձեռք բերում և այլն: Մ. Թևոսյանն ասաց, որ պայթեցման աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ ապահովվեն բնակիչների՝ նրանց սեփականության, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգությունը:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գ. Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու
Քաջարան համայնքի բնապահպանության,
գյուղատնտեսության և տնտեսական
զարգացման ծրագրերի բաժնի պետ Գ. Գաբրիելյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Մ. Հովսեփյան

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ պայթեցման աշխատանքների իրականացումը նույնպես հստակեցվելու է շինարարության փուլում: Նա նշեց, որ պայթեցման աշխատանքներ իրականացնելուց առաջ կատարվելու են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, որոնք ենթադրում են՝ մեթոդոլոգիայի մշակում և ներկայացում, համայնքի և բնակիչների իրազեկում, նախարարության կողմից թույլտվության ձեռք բերում և այլն: Մ. Թևոսյանն ասաց, որ պայթեցման աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ ապահովվեն բնակիչների՝ նրանց սեփականության, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգությունը:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գ. Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու
Քաջարան համայնքի բնապահպանության,
գյուղատնտեսության և տնտեսական
զարգացման ծրագրերի բաժնի պետ Գ. Գաբրիելյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Մ. Հովսեփյան

3

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների (չորրորդ քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

22 Սյունիքի մարզ, գյուղ Գեղի 2.11.2023թ.

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպություն կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
Հակոբյանյան Գայանե	գ. Գեղի	098 390 444	
Գրիգորյան Ա.Ա.	գ. Գեղի	094201796	
Հայրապետյան Ելենա	գ. Գեղի	077506459	
Գասպարյան Ջոն	գ. Գեղի	093207459	
Ալոյան Հասմիկ Սարգսի	գ. Գեղի	093-90-20-54	
Գրիգորյան Ասատուր	գ. Գեղի	077 193299	
Պետրոսյան	Առենի գ. Գեղի	0.93.749.360	
Հարությունյան Գևորգ	գ. Գեղի	077270872	
Պետրոսյան Գուրգեն	գ. Գեղի	094657056	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջանակ միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների (հաղորդակցում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

22 Սյունիքի մարզ, գյուղ Գեղի 2.11.2023թ.

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպություն կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
		093395653	
		094134933	
		094165459	
		093871862	
		055416180	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

03.11.2023, գ. Դարբաս





ՀՀ Սյունիքի Մարզ, գ. Դարբաս *03.11.2023թ.*

Սույն թվականի նոյեմբերի 3-ին ժամը 10:30-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի Դարբաս բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (չորրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին՝ Դարբաս, Շենաթաղ, Շամբ, Լոր և այլ հարակից բնակավայրերի վարչական ղեկավարները, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ ՃԴ), ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/, Ձեռնարկողի՝ «Քոնսեկորադ» ՍՊԸ ներկայացուցիչները և բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը)։

Բացման խոսքն ասաց Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար Գեղամ Օհանյանը։ Նա շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, նշեց, որ այսօր անց են կացվելու Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ չորրորդ հանրային քննարկումները և խոսքը փոխանցեց Ձեռնարկողի ներկայացուցիչ Միքայել Թևոսյանին։

Մ. Թևոսյանը ներկայացրեց հանրային քննարկմանը ներկա մասնագետների թիմը, ապա ներակայցրեց Ծրագրի ընդհանուր բնութագիրը, բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները և նշեց, որ այդ տեղեկատվությունը ներկայացված է նաև ՇՄԱԳ հաշվետվության մեջ։ Նա նաև մանրամասն ներկայացրեց մինչև այս փուլը կատարված աշխատանքները, հետազոտությունները և ուսումնասիրությունները։ Այնուհետև Մ. Թևոսյանը խոսքը փոխանցեց ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հերիքնազ Մկրտչյանին։

Հ. Մկրտչյանը ներկայացավ, նշեց, որ 2018 թվականին սույն Ծրագրի շրջանակներում իրականցվել է ՇՄԱԳ գործընթացը, բայց հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքներ չիրականացնելու դեպքում Ծրագրի ՇՄԱԳ գործընթացը պետք է իրականացնել կրկին։

Նա նշեց, որ այժմ, սույն Ծրագրի շրջանակներում իրականացվում է արդեն չորրորդ հանրային քննարկումը՝ նախորդ ՇՄԱԳ հաշվետվության թարմացման նպատակով: Հ. Մկրտչյանը մանրամասն ներկայացրեց մինչ հանրային քննարկումները կատարված աշխատանքները, ներառյալ՝ կատարված ուսումնասիրությունները, ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայցված տեղեկատվությունը, ինչպես նաև ՊՈՒԱԿ-ի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները: Նա կարևորեց այն հանգամանքը, որ եթե համայնքների ներկայացուցիչների կողմից կլինեն դիտողություններ և/կամ առաջարկություններ, ապա հնարավորության դեպքում, դրանք հաշվի կառնվեն:

Հ. Մկրտչյանի ելույթից հետո քննարկումներ ծավալվեցին կենդանիների միգրացիոն ուղիների, անտառային տարածքների և անցուղիների վերաբերյալ:

Մ. Թևոսյանը նշեց, որ բոլոր նշված ասպետկները հաշվի են առնվել, դրանց վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ ռիսկերը, դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները, տարածքները, հնարավոր լուծումները և այլն, ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվությունում: Նա նաև ներկայցերց, որոշ մանրամասներ ճանապարհի երկայնքով նախատեսված կենդանիների անցուղիների վերաբերյալ:

ՃԴ ներկայացուցիչ Ինեսա Զարրգարյանը հավելեց, որ բնակիչների հետ քննարկումների արդյունքում առաջարկվել են նոր անցուղիների տարբերակներ, որոնք հաշվի են առնվել և կհստակեցվեն շինարարության փուլում:

Ներկաները հետաքրքրվեցին, թե ի՞նչպես են կազմակերպվելու աշխատանքները շինարարության փուլում, պահպանվելու են արդյո՞ք անվտանգության նորմերը և հնարավոր վնասի դեպքում լինելո՞ւ են արդյոք փոխհատուցումներ:

Մ. Թևոսյանը և Ի. Զարգարյանը պատասխանեցին հարցերին, նշելով, որ՝ առաջին հերթին Կապալառուն ներակայացնելու է կառավարման պլան, որտեղ մանրամասն ներկայացնելու է թե՛ նախատեսվող աշխատանքները, թե՛ դրանց ընթացքում հնարավոր ռիսկերը և թե՛ դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդկանցան և նրանց սեփականության հետ կապված անվտանգության հետ կապված բոլոր ասպեկտները: Նրանք նշեցին, որ աշխատանքները կազմակերպվելու են հնարավորինս այնպես, որ վերացնեն որևէ հնարավոր վնասի առաջացումը, սակայն որևէ վնասի առաջացման դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ կախված իրավիճակից (փոխհատուցում, վնասի և/կամ դրա հետևանքների վերացում և այլն): Մ. Թևոսյանը

նաև հավելեց, որ շինարարության փուլում Կապալառուն սերտ համագործակցելու է ազդակիր համայնքի հետ:

Դարբաս բնակավյրի ներկայացուցիչ Կնյազ Ստեփանյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք իրականացվել են փոշու, աղմուկի և թրթռման չափումներ և խնդրեց ներկայացնել այդ չափումների վերաբերյալ մանրամասներ:

Մ. Թևոսյանը նշեց, որ ներկայացված գործընթացի շրջանակներում իրականացվել են համապատասխան չափումներ և դրանց արդյուքնները ներկայացվել են ՇՄԱԳ հաշվետվությունում: Նա կարևորեց, որ դրանք չեն սահմանափակվելու միայն այս փուլի շրջանակներում կատարված չափումներով, այլ իրականացվելու են նաև շինարարության փուլում, թե՛ շին. աշխատանքների իրականացումից առաջ, և թե՛ դրանց ընթացքում: Մ. Թևոսյանը նաև հավելեց, որ շինարարության ընթացքում որևէ խնդրի ծագման դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցառումեր, որոնք նույնպես ներկայացախ կլինեն կառավարման պլանում:

Ի. Զարգարյանը հավելեց, որ այդ գործընթացի շրջանակներում իրականացվելու են նաև ջրային ռեսուրսների որակի ֆոնային չափումներ:

Հ. Մկրտչյանը հարցրեց, թե ինչպե՞ս է կազմակերպվելու ազդակիր անձանց ներգրավվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում:

Մ. Թևոսյանը նշեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում, ազդակիր անձիք հնարավորություն են ունենալու իրենց բողոքները/առաջարկությունները ուղղեն համապատասխան մարմնին բողոքների լուծման մեխանիզմի միջոցով, որը արդյունավետ աշխատում է«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի այլ հատվածներում: Ապա նա մանրամասն ներկայացրեց այդ մեխանիզմը և հավելեց, որ շինարարության փուլում լինելու են նաև համապատասխան մասնագետներ, որոնք զբաղվելու են այդ հարցերով:

Ի. Զարգարյանը հավելեց, որ բացի այդ մեխանզիմից ցանկացած անձ կարող է ներկայացնել իր բողոքը/առաջարկությունը ՀՀ օրենքների և միջազգային նորմերի համաձայն իրեն հարմար տարբերակով:

Կ. Ստեփանյանը հարցերեց, թե կարո՞ղ են արդյոք օտարման գոտում ընկած հողերը մշակվել, թե ոչ:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Ի. Զարգարյանը նշեց, որ քանի դեռ ազդակի անձիք չեն ստացել համապատասխան ծանուցում, նրանք կարող են շարունակել իրենց գործունեությունը այդ տարածքներում:

Քննարկումներ ծավալվեցին հողերի օտարման հետ կապված հարցերի և ժամկետների հետ կապված: Մ. Թևոսյանը և Ի. Զարգարյանը մանրամասն ներկայացրեցին հողերի օտարման գործընթացը:

Ներկաները հետաքրքրվեցին, թե արդյո՞ք հնարավոր է այս գործունեության իրականացման ընթացքում ՃԴ ներկայացնել նախատեսվող ճանապարհի որևէ հատվածում սպասարկման կետի կառուցման նախագիծ և այն նույնպես ներգրավվել ներկայացվող գործունեության շրջանակներում:

Ի. Զարգարյանն ասաց, որ նշվածը չի կարող հանդիսանալ ներկայացվող գործունեության մի մաս, քանի որ Ծրագրի նախագիծը վերջնական է, բայց նշեց, որ այդ առաջարկությունը ողջունելի է և մարդիկ հնարավորություն են ունենալու նմանատիպ գործունեություն ծավալել նախատեսվող ճանապարհի թույլատրելի հատվածներում:

Մ. Թևոսյանը հավելեց, որ ճանապարհի նախագիծը ենթադրում է նաև սպասարկման կետերի հատվածներ, որոնք ապագայում կարող են օգտագործվել ըստ նշանակության՝ համապատասխան գործընթացների իրականացումից հետո:

Ներկաները հարցրեցին, թե ի՞նչ միջոռացում է ձեռնարկվելու, եթե շինարարության ընթացքում վնասվի բնակչի հողատարածքը:

Ի. Զարգարյանը պատասխանեց, որ առաջին հերթին աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ որևէ վնաս չպաճառեն մարդկանց սեփականությանը, իսկ եթե պատճառվի որևէ վնաս, ազդակիր անձը ստանալու է համապատասխան փոխհատուցում:

Մ. Թևոսյանը կարևորեց այն հանգամանքը, որ Կապալառուն շին. աշխատանքների ընթացքում սերտ համագործակցելու է համայնքի ներկայացուցիչների հետ նաև նման պատահարները նվազագույնի հասցնելու նպատակով:

Հ. Մկրտչյանը հավելեց, որ համայնքին հասանելի են լինելու կառավարման պլանները, որտեղ լինելու են ներկայացված նաև այն միջոցառումները, որոնք արդեն ներկայացվել են հանրային քննարկումների ընթացքում և նշեց, որ բնակիչները կարող են պահանջել Կապալառուից այդ միջոցառումների իրականացում, եթե դրանք չեն իրականացվում կամ իրականցվում են թերի:

Մ. Թևոսյանը հավելեց, որ փաստաղթորը հասանելի կլինեն ոչ միայն համայնքապետարանում, այլև ՃԴ պաշտոնական կայքէջում, որտեղից նույնպես բնակիչները կարող են օգտվել:

Ի. Զարգարյանը և Մ. Թևոսյանը նշեցին, որ բնակիչները հնարավորություն են ունենալու նաև իրենց բողոքները/առաջարկությունները հասցեագրել համապատասխան մարմիններին նաև համայնքապետարանի միջոցով: Ի. Զարգարյանը հավելեց, որ առաջացող հարցերի մեծամասնությունը շատ արդյունավետ լուծում են ստանում հենց Կապալառուի և համայնքի միջև համագործակցության ընթացքում:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գ. Օհանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու՝
Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար Գ. Օհանյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Մ. Թևոսյան

Քննարկումները արձանագրեց Մ. Հովսեփյան

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գ. Օհանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու՝
Դարբաս բնակավայրի վարչական ղեկավար՝ Գ. Օհանյան

Շահառուների ներկայացուցիչ՝ Մ□ Թևոսյան

Քննարկումները արձանագրեց՝ Մ□ Հովսեփյան

5

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

«Ճանապարհային դեպարտամենտ» ինֆրաստրուկտուր կողմից կազմակերպված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և վարձաքննական գործընթացի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների (նորրորդ քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Դաբրաս 3.11.2023թ.

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպություն կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Մատրագրություն / Signature
Գեղամ Ծատրյան	Դաբրաս գյուղապետարան	093008622	
Կարեն Ասատրյան	ՀՀ Գորիսի գրասենյակ	091624215	
Գեղամ Գրիգորյան	Գորիսի պետական	094370410	
Զարեհ Բալասանյան	Դաբրաս	093-90-25-95	
Արամ Ավագյան	Դաբրաս	098-79-95-04	
Հայկ Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզ	099640557	
Ալվարդ Ղազարյան	Գանձասարի Պկտ	094134233	
Մարիամ Ղազարյան	Դաբրասի գյուղապետարան	093395553	

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

ՀԱՎԵԼՎԱԾ 7: ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մթնոլորտային օդի որակը

Պոտենցիալ կլանիչները ընտրվել են սոցիալապես կարևոր կառույցներից, ինչպիսիք են բնակելի տները, դպրոցները, խանութները, եկեղեցիները, թանգարանները կամ այլ շինություններ, որոնք առկա են ճանապարհի երկայնքով յուրաքանչյուր գյուղում և օդի որակի տեսանկյունից զգայուն լինելով կարող են ազդվել մթնոլորտային արտանետումներից: Որոշ չափման կետեր ընտրվել են գոյություն ունեցող ճանապարհների երկայնքով/մոտ: Այդ կետերում մթնոլորտային օդի վրա կարող են բացասական ազդել առաջարկվող ճանապարհի շինարարությունը և հետագա շահագործումը:

Մթնոլորտային օդում CO, PM2.5 և PM10 կոնցենտրացիաները չափվել են 2022 թվականի հունիսի 3-9-ը չափիչ սարքերի միջոցով: Յուրաքանչյուր զգայուն կետում երեք չափումներ են անցկացվել՝ օրվա տարբեր ժամերին, որոնց հիման վրա հաշվարկվել է միջին օրական կոնցենտրացիան: Մթնոլորտում SO_2-ի և NO_2-ի կոնցենտրացիաները որոշվել են պասիվ նմուշառիչների միջոցով, որոնք կլանում են շրջակա միջավայրից SO_2-ը և NO_2-ը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք տեղադրված են եղել ընտրված վայրերում՝ 2022 թվականի հունիսին՝ 10-12 օրերի ընթացքում, որից հետո պասիվ նմուշառիչները ենթարկվել են քիմիական անալիզի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնի լաբորատորիայում: Չափումների արդյունքները համեմատվել են ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշմամբ, ինչպես նաև ԱՀԿ օդի որակի ուղեցույցներով (ՕՈՈւ) սահմանված SO_2, NO_2, CO, PM2.5 և PM10 ՍԹԿ-երի հետ:

Աղյուսակ 1: Օդի որակի նմուշառման կետերի տեղադիրքը


Սիսիան-Շենաթաղ հատված	
S1	Մ2 ճանապարհի և նախագծային ճանապարհի Սիսիան-Շենաթաղ հատվածի սկզբնակետի հետ հատման կետ՝ "Օջախ" ռեստորան
S2	Աղիտու գյուղ
S4	Վաղատին գյուղ
S7	Շամբ ՀԷԿ-ի դիմաց
S10	Դարբաս գյուղ
S12	Լոր գյուղ
S14	Շենաթաղ գյուղ
ER1*	Աղիտու գյուղ, դպրոցի մոտ
ER2	Նորավան գյուղ, դպրոցի մոտ
ER3	Դարբաս գյուղ, Սուրբ Ստեփան եկեղեցի մոտ

ER4	Գետաթաղ գյուղ, Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ
ER5	Լոր գյուղ, Սուրբ Գևորգ եկեղեցու և բնակելի տների մոտ
ER6	Շենաթաղ գյուղ, Ռ.Վասիլյանի հուշահամալիրի մոտ
Քիրս-Քաջարան հատված	
K1	Չնբակեցված տարածք, որը գտնվում է դեպի Աստղաբերդ տանող գործող ճանապարհի և դեպի Քիրս տանող ճանապարհի խաչման կետից մոտ 1.5 կմ դեպի հյուսիս
K3	Գեղի գյուղ
K5	Գեղի (Վերին Գեղավանք) գյուղ
K8	Գեղի (Վերին Գեղավանք) գյուղ, Գեղի ջրամբարի պատվարից հետո
K9	Կավճուտ գյուղ
K10	Լեռնաձոր գյուղ
K11	Լեռնաձոր գյուղ, էլեկտրական ենթակայանի/պոմպակայանի մոտ
ER7	Կավճուտ գյուղ, երեք բազմաբնակելի շենքերի մոտ
ER8	Մ-2 ճանապարհի և դեպի Քիրս բնակավայր տանող ճանապարհի հատման կետում գտնվող կոմերցիոն օբյեկտի մոտ


*ER - գոյություն ունեցող ճանապարհների երկայնքով/մոտ գտնվող զգայուն կետեր, որոնց վրա կարող է բացասաբար ազդել առաջարկվող ճանապարհի շինարարությունը և/կամ շահագործումը

Պատկեր 1: NO2 կոնցենտրացիաները չափված ՇՄԱԳ ուսումնասիրման ընթացքում ճանապարհի երկայնքով տարբեր կետերում և դրանց համադրումը Հայաստանում գործող ՍԹԿ-երի և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) օդի որակի ուղեցույցների (2005 և 2021) հետ:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ




Պատկեր 2: PM2.5 կոնցենտրացիաները չափված ՇՄՍԱԳ ուսումնասիրման ընթացքում ճանապարհի երկայնքով տարբեր կետերում և դրանց համադրումը Հայաստանում գործող ՍԹԿ-երի և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) օդի որակի ուղեցույցների (2005 և 2021) հետ:




Պատկեր 3: PM10 կոնցենտրացիաները չափված ՇՄՍԱԳ ընթացքում ճանապարհի երկայնքով տարբեր կետերում և դրանց համադրումը Հայաստանում գործող ՍԹԿ-երի, EU 2008/50/EC

ստանդարտների և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) օդի որակի ուղեցույցների (2005 և 2021) հետ:



Պատկեր 4: SO2 կոնցենտրացիաները չափված ՇՄՍԱԳ ընթացքում ճանապարհի երկայնքով տարբեր կետերում և դրանց համադրումը Հայաստանում գործող ՍԹԿ-երի, EU 2008/50/EC ստանդարտների և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) օդի որակի ուղեցույցների (2005 և 2021) հետ:



Մթնոլորտում SO2, NO2, CO, PM2.5 և PM10 փաստացի կոնցենտրացիաները չափման բոլոր կետերում գտնվում են ազգային օրենսդրությամբ սահմանված ՍԹԿ-երի

սահմաններում: Այդ կոնցենտրացիաները համապատասխանում են նաև ԱՀԿ 2005 թվականի ուղեցույցներին, սակայն, գերազանցում են ավելի խիստ 2021 թվականի: Մթնոլորտային օդում SO_2-ի փաստացի կոնցենտրացիաները գերազանցում են ԱՀԿ ուղեցույցները երկու վայրերում՝ Վաղատին գյուղում և K1 կետում (չբնակեցված տարածք, որը գտնվում է գոյություն ունեցող ճանապարհի անցման կետից մոտ 1.5 կմ հյուսիս դեպի Նոր Աստղաբերդ տանող ճանապարհի մոտ): Կավճուտում CO-ի չափված կոնցենտրացիաները ավելի քան երեք անգամ գերազանցում են ԱՀԿ ՕՈՈւ-ին: Արդյունքները ցույց են տալիս, որ մթնոլորտային օդի որակը ընդհանուր առմամբ բարվոք է, որոշ տեղային աղտոտման աղբյուրներով, ինչպիսիք են բնակիչների կողմից օգտագործվող վառելիքը, ինչը հանգեցնում է SO_2-ի բարձր կոնցենտրացիաների ճանապարհի որոշ կետերում (չնայած չափված կոնցենտրացիաների մեծամասնությունը կազմում է ոչ ավել քան 2021 ՕՈՈւ-ի կեսը): Ներկայացված օդի որակի տվյալները պետք է օգտագործվեն զգուշությամբ, քանի որ չափվել են ոչ թե ամբողջ տարվա կտրվածքով, այլ որոշակի սահմանափակ ժամանակահատվածում: Հետևաբար, այս չափումների արդյունքները օգտագործվում են զուտ գնահատումներ կատարելու նպատակով:

ՀՀ "Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում" №2-III-11.3 սանիտարական նորմերով 14 և ՄՖԿ-ի Բնապահպանության, առողջապահության և անվտանգության ընդհանուր ուղեցույցով (2007թ.) 15 նորմերով սահմանված համարժեք (միջին) և առավելագույն աղմուկի/ձայնի Սահմանային թույլատրելի Մակարդակները (ՍԹՄ) ամփոփված են Աղյուսակ 2-ում: Աշխատատեղերի և հասարակական շենքերի համար աղմուկի հայկական չափանիշները ավելի խիստ են, քան ՄՖԿ/ԱՀԿ-ի ստանդարտները և հետևաբար որպես ծրագրի չափանիշ կօգտագործվեն ազդեցության գնահատման ժամանակ: Հայաստանի և ՄՖԿ/ԱՀԿ աղմուկի սահմանաչափերը նույնն են բնակելի տարածքների համար: Որտեղ չկան ՄՖԿ/ԱՀԿ արժեքներ, կկիրառվեն հայկական չափանիշները և հակառակը:

Աղյուսակ 2: Աղմուկի համար սահմանված ՀՀ սանիտարական նորմերով սահմանված Սահմանային Թույլատրելի Մակարդակները (ՍԹՄ) և ՄՖԿ/ԱՀԿ-ի ստանդարտները

№	Սենքերի և տարածքներ	ՍԹՄ, դԲԱ		
		Ազգային		ՄՖԿ/ԱՀԿ
		Չայնի համարժեք	Չայնի առավելագույն	Չայնի մեկ ժամվա համարժեք
1	Աշխատատեղ	80		85
2	Խանութների առևտրի սրահներ, օդանավակայանների և կայարանների սպասասրահներ, կենցաղային սպասարկման կազմակերպությունների ընդունման կետեր	60	75	


CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

	Արդյունաբերական, կոմերցիոն				70 (ցերեկ և գիշեր)
3	Բնակելի շենքերին, պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների համար տունինտերնատների, մանկապարտեզների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների, գրադարանների շենքերին անմիջապես հարող տարածքներ	ցերեկային	55	70	55
		գիշերային	45	60	45


Աղմուկ և թրթռում

Մշտադիտարկման 22 կետերում աղմուկի չափումների արդյունքները ներկայացված են ազգային սանիտարական նորմերով (քանի որ դրանք ավելի խիստ են, քան ՄՖԿ-ի ուղեցույցները) սահմանված համարժեք և առավելագույն ՍԹՄ-երի հետ համեմատ: Lահամ. արժեքները հիմնականում գերազանցում են ազգային ՍԹՄ-երը: Նույն եզրահանգումը ճիշտ է նաև աղմուկի առավելագույն մակարդակների համար, որոնք գերազանցել են մշտադիտարկման ընթացքում ավելի զգալի գերազանցումներով:


Պատկեր 5: Ցերեկային ժամերին չափված աղմուկի համարժեք Lահամ. արժեքները (կապույտ սյուներ) համեմատած ՀՀ սանիտարական նորմերի (կարմիր սյուներ) հետ




Պատկեր 6: Գիշերային ժամերին չափված աղմուկի Lահավ. արժեքները (կապույտ սյուներ) համեմատած ՀՀ սանիտարական նորմերի (կարմիր սյուներ) հետ



Պատկեր 7: Ցերեկային ժամերին չափված աղմուկի առավելագույն Lառավ. արժեքները (կապույտ սյուներ) համեմատած ՀՀ սանիտարական նորմերի (կարմիր սյուներ) հետ



Պատկեր 8։ Գիշերային ժամերին չափված աղմուկի Lաառավ. արժեքները (կապույտ սյուներ) համեմատած ՀՀ սանիտարական նորմերի (կարմիր սյուներ) հետ



Աղմուկի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ չնայած գյուղական միջավայրի, առկա են բարձր աղմուկի աղբյուրներ, և այդ աղբյուրները, ամենայն հավանականությամբ, գյուղատնտեսական տեխնիկան և գործիքներ են, ինչպես նաև մարդատար մեքենաները և բեռնատարները: Այս տրանսպորտային միջոցներից շատերը հին են և վատ պահպանված՝ ինչը և հանդիսանում է բարձր աղմուկի պատճառը: Ազդեցությունը ավելի է սրվում գիշերը, երբ նման տրանսպորտային միջոցները շարժվում են ընդհանուր առմամբ ավելի հանդարտ գյուղական միջավայրերով:

Պատկեր 9: Գյուղերում բազմաթիվ հին և վատ խնամված գյուղ.տեխնիկայի օրինակներ, որոնք հանդիսանում են աղմուկի հավանական աղբյուրներ



Տարբեր տեսակների թրթռման արագացումների (համարժեքային ճշգրտված) սահմանային թույլատրելի մեծությունները բերված են Աղյուսակ 3-ում (ՀՆ N 2.2.4-009-06 "Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմեր-ի հիգիենիկ նորմեր"-ի 18 համաձայն): Քանի որ միջազգային վարկատուները չունեն մարդու և կառուցվածքների համար սահմանված թրթռումների սահմանաքանակներ, կարելի է կիրառել 2002/44/EC շրջաբերականը, բրիտանական BS 5228-2:2009, BS 7385-2:1993 ու ISO 4866:2010 ստանդարտները (մանրամասների համար տես Բաժին 3.2.2-ը): Այնուամենայնիվ, ազգային նորմերը և միջազգային ստանդարտները ուղղակիորեն համատեղելի չեն, և, հետևաբար, հետագա վերլուծությունների մեջ կիրառվելու են ազգային չափանիշները:

Աղյուսակ 3: ՀՀ հիգիենիկ նորմերով սահմանված թրթռման արագացման թույլատրելի մեծությունները տարբեր զգայուն կլանիչների համար

№	Ընդհանուր թրթռման կարգերը	Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված	
		մ/վրկ2	դԲ
1	Տրանսպորտատեխնոլոգիական (2-րդ կարգ)	0.28	109
2	Տեխնոլոգիական (3-րդ կարգի ա))	0,1	100
3	Տեխնոլոգիական (3-րդ կարգի բ))	0.04	92

4	Տեխնոլոգիական (3-րդ կարգի գ))	0.014	83
5	Բնակելի շենքեր, հիվանդասենյակներ և հանգստյան տներ	0.004	72

Թրթռման արագացման ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները (օրվա ընթացքում միևնույն կետում տարբեր ցերեկային ժամերին իրականացված երեք գործիքային չափումների միջին արժեքը)՝ համեմատած համապատասխան ազգային հիգիենիկ Սահմանային Թույլատրելի Մեծությունների (ՍԹՄ) հետ, բերված են ստորև ներկայացված աղյուսակում: Սիսիան-Շենաթաղ հատվածում թրթռման արագացման ելակետային մակարդակը հիմնականում ցածր է ազգային ՍԹՄ-երից: S1 և ER4 կետերում թրթռման արագացման մակարդակները մի փոքր գերազանցում են ՍԹՄ-երը (համապատասխանաբար 0.1 դԲ-ով և 0.3 դԲ-ով): Զագիկավան բնակավայրի մոտ K10 կետում թրթռումների արագացման մակարդակը կազմում է 77.8 դԲ, ինչը 5.8 դԲ-ով բարձր է եղել ՍԹՄ-ից, ինչը պայմանավորված է Մ2 ճանապարհով ծանր տրանսպորտային միջոցների երթևեկության մեծ խտությամբ: K3, K5 և ER8 կետերում թրթռման արագացման մակարդակները գերազանցում են ՍԹՄ-երը համապատասխանաբար 1.1, 0.6 և 0.4 դԲ-ով: Ելակետային թրթռումների հիմնական աղբյուրները ծանր տրանսպորտային միջոցներն են առկա ճանապարհների վրա: Գետերի մոտ գտնվող կետերում ջրի հոսքը նույնպես նպաստում է թրթռումների առաջացմանը:

Աղյուսակ 4: Թրթռման արագացման ճշգրտված (համարժեքային ճշգրտված) չափված արժեքները համեմատած ՀՀ հիգիենիկ նորմերի հետ

№	Կետեր	Ճշգրտված (համարժեքային ճշգրտված) արժեքներ, դԲ	
		Միջինացված արժեքներ (չափված)	ՍԹՄ
1	S1	72.1	72
2	S2	70.0	72
3	ER2	69.2	72
4	ER1	68.4	72
5	S4	67.2	72
6	S5	64.3	72
7	S7	64.3	100
8	S10	64.9	72
9	ER3	66.6	72
10	ER4	72.3	72
11	ER5	67.7	72

12	S12	67.7	72
13	S14	62.8	72
14	ER6	67.2	72
15	K1	65.8	72
16	K3	73.1	72
17	K4	68.8	100
18	K5	72.6	72
19	K6	72.0	100
20	K8	66.9	72
21	K9	64.4	72
22	K10	77.8	72
23	K11	70.6	100
24	ER7	68.0	72
25	ER8	72.4	100

ՀԱՎԵԼՎԱԾ 8: ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ

Ծրագրի հնարավոր ազդեցության գոտում գտնվող գետերից և դրանց վտակներից տասը ջրի նմուշառում է իրականացվել, այդ թվում նախատեսվող կամուրջների տակ (S3, S6, S8, S9, S11, S14 և K7 կետեր), թունելի մոտից (կետ K2) և առաջարկվող ճանապարհի երկայնքով (K10 և K12 կետեր): Վեց նմուշ վերցվել է Սիսիան-Շենաթաղ հատվածի ջրային հոսանքներից և չորս նմուշ՝ Քիրս-Քաջարան հատվածի ջրերից: Ջրի նմուշների անալիզները կատարվել են Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիայում: Սիսիան-Շենաթաղ հատվածի ջրային հոսքերը պատկանում են Որոտան գետի ավազանին, ուստի համապատասխան վեց ջրային նմուշների որակի գնահատման համար օգտագործվել են Որոտան գետի ջրավազանի համար սահմանված էկոլոգիական նորմերը: Նմանապես, Գեղի գետի համար սահմանված էկոլոգիական նորմերը օգտագործվել են Քիրս-Քաջարան հատվածի երկայնքով չորս ջրային նմուշների որակի գնահատման համար, քանի որ բոլոր չորս ջրային մարմինները ընդգրկված են Գեղի գետի ավազանի մեջ: Սիսիան-Շենաթաղ և Քիրս-Քաջարան հատվածների երկայնքով ջրային հոսքերի ջրի որակը ներկայացված է համապատասխանաբար ստորև ներկայացված աղյուսակներում:

Աղյուսակ 1: Ջրի որակի անալիզների արդյունքները որոշված Սիսիան- Շենաթաղ հատվածի երկայնքով վերցված 6 նմուշներից

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

№	Հարաչափեր	Չափ-ման միավոր	S3		S6		S9		S11		S13		S14	
			Արդյունքը	Կարգը	Արդյունքը	Կարգը	Արդյունքը	Կարգը	Արդյունքը	Կարգը	Արդյունքը	Կարգը	Արդյունքը	Կարգը
1	Գույն	աստի-ճան	15	3	10	3	15	3	15	3	15	3	20	3
2	Հոտ	բալ	0	1	0	1	0	1	0	1	0	1	0	1
3	Թափանցի-կություն	սմ	31	*	31	*	31	*	31	*	31	*	31	*
4	Կախութային չոր նյութեր	մգ/լ	19.7	2	13.6	2	24.7	2	14.7	2	21.7	2	22.0	2
5	Ջրածնային ցուցիչ	-	8.3	1	8.1	1	8.1	1	8.2	1	7.9	1	7.8	1
6	Հանքայնացում	մգ/լ	412	*	212	*	157	*	143	*	172	*	82	*
Расчёт на существующее положение.


Город : 164 Каджаран-4
Объект : 0001 Строительная площадка Вар.№ 1
ПК ЭРА v3.0, Модель: МРР-2017
0330 Серы диоксид
Условные обозначения:
Территория предприятия
Максим. значения концентрации
Расч. прямоугольник N 01
Изолинии в долях ПДК
0.040 ПДК
0.040 ПДК
0.040 ПДК
0.040 ПДК
0 475 1410м.
Масштаб 1:47300
Режим работы предприятия: 1 - Основной
Макс концентрация 0.0402394 ПДК достигается в точке x= 3847 y= 3452
При опасном направлении 196° и опасной скорости ветра 7 м/с
Расчетный прямоугольник № 1, ширина 8398 м, высота 4940 м,
шаг расчетной сетки 494 м, количество расчетных точек 18*11
Расчёт на существующее положение.


Город : 164 Каджаран-4
Объект : 0001 Строительная площадка Вар № 1
ПК ЭРА v3.0, Модель: МРР-2017
6204 0301+0330
Условные обозначения:
Территория предприятия
Максим. значения концентрации
Расч. прямоугольник N 01
Изолинии в долях ПДК
0.052 ПДК
0.053 ПДК
0.053 ПДК
0.054 ПДК
0 475 1410м.
Масштаб 1:47300
Режим работы предприятия: 1 - Основной
Макс концентрация 0.0541898 ПДК достигается в точке x= 3847 y= 3452
При опасном направлении 199° и опасной скорости ветра 7 м/с
Расчетный прямоугольник № 1, ширина 8398 м, высота 4940 м,
шаг расчетной сетки 494 м, количество расчетных точек 18*11
Расчёт на существующее положение.


Город : 164 Каджаран-4
Объект : 0001 Строительная площадка Вар № 1
ПК ЭРА v3.0, Модель: МРР-2017
0328 Углерод
Условные обозначения:
Территория предприятия
Максим. значения концентрации
Расч. прямоугольник N 01
Изолинии в долях ПДК
0.0033 ПДК
0.0033 ПДК
0.0036 ПДК
0 475 1410м.
Масштаб 1:47300
Режим работы предприятия: 1 - Основной
Макс концентрация 0.0039984 ПДК достигается в точке x= 3353 y= 1970
При опасном направлении 17° и опасной скорости ветра 7 м/с
Расчетный прямоугольник № 1, ширина 8398 м, высота 4940 м,
шаг расчетной сетки 494 м, количество расчетных точек 18*11
Расчёт на существующее положение.

Город : 164 Каджаран-4
Объект : 0001 Строительная площадка Вар.№ 1
ПК ЭРА v3.0, Модель: МРР-2017
0337 Углерода оксид



Условные обозначения:
Территория предприятия
Максим. значения концентрации
Расч. прямоугольник N 01

Изолинии в долях ПДК
0.080 ПДК
0.080 ПДК
0.080 ПДК
0.080 ПДК

0 475 1410м
Масштаб 1:47500

Режим работы предприятия: 1 - Основной
Макс концентрация 0.0802202 ПДК достигается в точке x= 3867 y= 3452
При опасном направлении 196° и опасной скорости ветра 7 м/с
Расчетный прямоугольник № 1, ширина 8398 м, высота 4940 м,
шаг расчетной сетки 494 м, количество расчетных точек 18*11
Расчёт на существующее положение.

Город : 164 Каджаран-4
Объект : 0001 Строительная площадка Вар.№ 1
ПК ЭРА v3.0, Модель: МРР-2017
2902 Взвешенные вещества



Условные обозначения:
Территория предприятия
Максим. значения концентрации
Расч. прямоугольник N 01

Изолинии в долях ПДК
0.406 ПДК
0.410 ПДК
0.414 ПДК
0.417 ПДК

0 475 1410м
Масштаб 1:47500

Режим работы предприятия: 1 - Основной
Макс концентрация 0.4182503 ПДК достигается в точке x= 3353 y= 1870
При опасном направлении 17° и опасной скорости ветра 7 м/с
Расчетный прямоугольник № 1, ширина 8398 м, высота 4940 м,
шаг расчетной сетки 494 м, количество расчетных точек 18*11
Расчёт на существующее положение.

12 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հողի օտարման եվ տարաբնակեցման ընթացակարգի փուլերը

- Հողի օտարման և տարաբնակեցման պլանի պատրաստումից հետո, սկսվելու է օտարման և փոխհատուցման փուլը (ՀՕՏԾ իրականացում): Շինարարական աշխատանքները սկսվելու են այս փուլի ավարտից հետո: Շինարարության աշխատանքները չեն կարող սկսվել, մինչև ազդեցություն կրած հողերի օտարումը և դրանց սեփականատերերին փոխհատուցման գումարի վճարումը չիրականացվի:

- ՀՕՏԾ պատրաստվում է միավորելով նախագիծը, կադաստրի քարտեզները և նախկինում անցկացված հետազոտությունները, որոնք տրամադրում են ազդեցություն կրած համայնքների, հողատարածքների և շինությունների մասին տեղեկություններ:

- ՀՕՏԾ-ի պատրաստումը ենթադրում է հետևյալ փուլերը՝

    1) Ազդեցության ենթակա հողատարածքների ճանաչումը որպես հանրային գերակա շահ
    2) Հանրային քննարկումներ՝ համայնքներում
    3) Մանրամասն չափագրում
    4) Ազդեցության ենթակա գույքի գրանցում, այդ թվում՝ ծառերը և գյուղատնտեսական մշակաբույսերը
    5) Մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտություն
    6) Նկարագրության արձանագրությունների կազմում և ստորագրում
    7) Ազդեցության ենթակա գույքի գնահատում՝ փոխհատուցման գումարի սահմանմամբ
    8) Վերջնական ՀՕՏԾ-ի հաստատում ՀՀ կառավարության և դոնոր կազմակերպության կողմից

- Վերջնական ՀՕՏԾ-ի իրականացում

    a. Պայմանագրի նախնական տարբերակի մասին ծանուցում ազդեցության ենթակա անձանց
    b. Վերջնական պայմանագրի պատրաստում և ստորագրում ազդեցության ենթակա անձանց հետ
    c. Ժառանգության հետ կապված և սեփականատերի՝ երկրից բացակայության հետ կապված հարցերի լուծումներ
    d. Օտարված սեփականության և սեփականության մի մասի պետական գրանցում

2. Փոխհատուցման սկզբունքները և մոտեցումները

Ծրագրի շրջանակներում «Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ» (ՀՕՏՇ)-ը պատրաստված է և հաստատված կառավարության որոշմամբ՝ սահմանելով փոխհատուցման իրականացման մոտեցումները: Այս որոշումը հաստատված է նաև

Եվրասիական զարգացման բանկի կողմից և մշակվել է հիմք ընդունելով Ասիական զարգացման բանկի սկզբունքների և մեր օրենքների համակցությամբ: Այս առումով, համեմատելով ՀՀ-ում իրականացված ոչ միջազգային ֆինանսավորմամբ իրականացված նման ծրագրերի հետ, մոտեցումները շատ բարենպաստ են ազդեցություն կրած կողմերի համար:

3. Փոխհատուցման մեխանիզմներ

- Անշարժ գույք (հողեր). և՛ գյուղատնտեսական, և ոչ գյուղատնտեսական հողերի դեպքում, այն անձիք, ում անունները նշված են սեփականության իրավունքի վկայականում, ստանալու են շուկայական (որն ավելի բարձր է) կամ կադաստրային արժեքի չափով փոխհատուցում, գումարած՝ 15%: Սովորաբար, շուկայական գինը ավելի բարձր է, քան կադաստրային արժեքը: Շուկայական գինը սահմանվում է հիմնվելով նախորդ 1 կամ 2 տարիների ընթացքում համայնքում կատարված գործարքների արժեքների վրա: Վաճառված հողամասերը համեմատվում են օտարված հողամասի հետ, և գինը որոշվում է՝ հիմնվելով նման հողամասերի արժեքների վրա: Եթե այդ համայնքում չկան գրանցված գործարքներ, ապա հաշվի են առնվում հարակից համայնքում կատարված գործարքները: Տարբեր հողամասեր նույն համայնքում կարող են ունենալ տարբեր գներ: Գինը կախված է հողի տիպից, ինչպիս օրինակ՝ վարելահող, արոտավայր, պտղատու այգի և այլն, այն նաև կախված է հողի թեքությունից, տեղակայված լինելով առաջին կամ երկրորդ գծում, քարքարոտության աստիճանից և այլն: Համապատասխանաբար, ծրագրի կամ համայնքի համար ընդհանրացված արժեք չկա: Փոխհատուցման արժեքի հաշվարկը նույնն է և՛գյուղատնտեսական, և՛ ոչ գյուղատնտեսական հողերի համար:

- Եթե կան վարձակալներ, այսինքն անձիք, ովքեր ունեն վարձակալի՝ հողի սեփականության իրավունքի պայմանագիր և համապատասխան վկայական կադաստրից, ապա վարձակալը ևս ստանալու է փոխհատուցում: Այս դեպքում, վարձակալը ստանալու է «շուկայական գին, գումարած՝ 15%» փոխհատուցում՝ կախված վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից: Եթե վարձակալության պայմանագրի լրանալուն մնում է մինչև 1 տարի, վարձակալի փոխհատուցումը կկազմի ընդհանուր փոխհատուցման արժեքի 5%-ը. պայմանագրի ժամկետի՝ մինչև 15 տարի լրանալու դեպքում փոխհատուցումը կկազմի 14%. պայմանագրի ժամկետի մինչև 25 տարի լրանալու դեպքում փոխհատուցումը կկազմի 20%, իսկ 25 և ավելի տարիներ հետո պայմանագրի ժամկետի լրացման դեպքում՝ 25%:

- **Օրինականացման ենթակա սեփականատերեր**. այս խումբը ներառում է անձանց, ովքեր հողակտորներ են ստացել հողակահատկացումների ժամանակ, սակայն սակայն չեն պատրաստել իրենց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը և կադաստրից վկայական ձեռք չեն բերել: Միայն սեփականության գրանցումից հետո և կադաստրից վկայականը ստանալուց հետո այդ անձիք կարող են ստանալ հաշվարկված փոխհատուցումը:

4. <u>Շինություններ և կառույցներ.</u> մոտեցումները տարբեր են բնակելի և ոչ բնակելի շինությունների համար: Բնակելի շինությունների դեպքում, անկախ կառույցի

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

կարգավիճակից կամ գրանցված լինելուց, սեփականատերը պետք է ստանա փոխարինման արժեքը, գումարած՝ 15%, որպես փոխհատուցում: Փոխհատուցման արժեքը որոշելու համար հաշվարկվում է, թե որքան գումար է պահանջվում քաղաքացուց նման կառույց կառուցելու համար: Հաշվարկը ներառում է շինանյութի արժեքը, աշխատուժի ծախսերը, նախագծի գինը և այլն: Սակայն, կառույցների մաշվածությունը չի հանվում փոխհատուցման արժեքից, այսինքն, եթե կառույցի վրա կան հին փայտե պատուհաններ, ապա հաշվարկվում է նոր փայտե պատուհանների տեղադրման գինը: Այնուամենայնիվ, եթե կառույցը չունի պատուհաններ, ապա փոխհատուցման արժեքում պատուհանների տեղադրման համար գումար չի հաշվարկվելու: Փոխհատուցումից անկախ, սեփականատերը նաև իրավունք ունի հին կառույցից տեղափոխելու բոլոր տիպերի նյութերը կամ շինանյութերը որոշակի ժամանակահատվածում՝ օտարման պայմանագրի ստորագրումից հետո:

- Փոխհատուցման արժեքի հաշվարկը բնակելի և ոչ բնակելի շինությունների համար նույնն է: Այնուամենայնիվ, ի տարբերություն բնակելի շինությունների, անօրինական ոչ բնակելի շինությունները չպետք է փոխհատուցվեն: Եթե կան այդպիսի շինություններ, սեփականատերը պետք է սկսի դրանց օրինականացման գործընթացը՝ փոխհատուցում ստանալու իրավասություն ունենալու համար: Օրինականացման գործառույթը պետք է անցկացվի որոշակի ժամանակահատվածում, որից հետո շինությունների օրինականացման համար փոխհատուցում չի վճարվելու: Այս հարցում աջակցություն ստանալու համար, սեփականատերերը կարող են կապ հաստատել ՊՈՒԿ-ի հետ:

5. <u>Վերաբնակները</u> ստանալու են նաև տարաբնակեցման նպաստներ, ինչպես նաև տարաբնակեցումից և սեփականության փոխադրումից կրած ազդեցության համար նպաստներ:

6. <u>Փոխհատուցում գյուղատնտեսական մշակաբույսերի համար</u>. այստեղ նույնպես կիրառվում է տարաբնակեցման արժեքի տրամաբանությունը, այն է՝ քաղաքացուն տրամադրել բավական գումար, որպեսզի վերջինիս կարողանա ստեղծել նույնը: Գյուղատնտեսական բերքի փոխհատուցման հաշվարկվելու է ակնկալվող բերքի արժեքով՝ շուկայական գներով: Օտարման ենթակա բերքատու հողամասերի վրա գյուղատնտեսական մշակաբույսերի քանակը և տիպը նկարագրված է լինելու գույքի նկարագրության արձանագրությունում:

7. <u>Ծառերի համար փոխհատուցում</u>. Ծառերի կորուստը հաշվարկվում է տարբեր ձևով՝ տարբեր ծառերի համար: Տարբերակվել են 3 տեսակի ծառեր – մրգատու ծառեր, դեկորատիվ ծառեր, և փայտանյութ տվող ծառեր: Մրգատու ծառերն իրենց հերթին բաժանվում են՝ երիտասարդ, դեռևս ոչ բերքատու և բերքատու ծառերի: Երիտասարդ ծառերի փոխհատուցումը կատարվելու է երիտասարդ ծառի շուկայական արժեքին համարժեք գնով: Դեռևս ոչ բերքատու ծառերի դեպքում հաշվարկը ներառում է երիտասարդ ծառի արժեքը և այն ներդրումները, որոնք արվելու են այդ ծառի վրա մի քանի տարիների ընթացքում՝ ջրում, պարարտավորում և այլն: Բերքատու ծառերի դեպքում փոխհատուցման արժեքը հաշվարկվում է հետևյալ կերպ. ծառի՝ մեկ տարում հնարավոր բերքի քանակը բազմապատկվում է տարիների թվով, որոնք պահանջվում են ծառի համար բերքատվության տարիքին հասնելու համար: Օրինակ՝ եթե խնձորի ծառը սկսում է բերք տալ տնկումից 5 տարի հետո, և քաղաքացին արդեն ունի բերքատու խնձորի ծառ, ապա խնձորի ծառի հնարավոր բերքը մեկ տարում հաշվարկվելու է և բազմապատկվելու 5

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

տարիներով, որի ընթացքում նոր տնկած ծառը դեռ բերք չի տվել: Դեկորատիվ ծառերը գնահատվելու են իրենց շուկայական արժեքներով: Փայտանյութ տվող ծառերը գնահատվելու են փայտանյութի ծավալի հաշվարկմամբ՝ օգտագործելով հատուկ մեթոդաբանություն:

8. <u>Ձեռնարկատիրական գործունեության փոխհատուցում</u>. կան ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցության երկու տարբերակներ՝ մշտական և ժամանակավոր: Մշտական ազեցության դեպքում գույքն ամբողջությամբ օտարվում է, և նույն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն այլևս չի լինում: Ժամանակավոր ազդեցության դեպքում, օրինակ՝ մուտքը կարող է արգելափակվել, կամ ազդեցության կարող է ենթարկվել կառույցի որոշ մասը, կամ շինություններից որևէ մեկը: Ժամանակավոր ազդեցության դեպքում հաշվարկվելու են ազդեցության տևողության ամիսները, և թե որքան ամիսներ են պահանջվում դրա սահմանափակման համար: Մշտական ձեռնարկատիրական գործունեության դեպքում, եթե այն օրինական է և ունի հարկային հայտարարագիր, հաշվարկվում է նախորդ մեկ տարում ստացած եկամուտը՝ համաձայն հարկային հայտարարագրերի, և փոխհատուցվում է այդ եկամտի գումարով: Եթե ձեռնարկատիրական գործունեությունը անօրինական է և չգրանցված, փոխհատուցումը հաշվարկվում է նվազագույն եկամտի տասներկու անգամի չափով: Եվ՛ ժամանակավոր, և՛ մշտական կորստի դեպքերում ձեռնարկատիրական գործունեության համար վարձված աշխատողները նույնպես ստանում են փոխհատուցում: Մշտական ազդեցության դեպքում հաշվարկվում է աշխատակցի միջին ամսական աշխատավարձը վերջին մեկ տարում և փոխհատուցվում է վեց ամիսների համար, այնպես որ աշխատակիցն ունենա բավականաչափ ժամանակ նոր աշխատանք գտնելու համար:

9. <u>Լրացուցիչ օժանդակություն</u>

- Բացի հիմնական փոխհատուցման գումարից, որոշ դեպքերի համար ծրագիրը տրամադրում է լրացուցիչ նպաստներ: Առաջին դեպքում օժանդակությունը տրամադրվում է ծայրահեղ աստիճանի ազդեցության դեպքում, ինչը տեղի է ունենում երկու հանգամանքներում՝ առաջին դեպքում նպաստը տրվում է գյուղատնտեսական եկամտի մեծ կորստի դեպքում, երբ օտարման ենթակա տարածքի կորստից տուժում է տնային տնտեսության ընդհանուր եկամտի ավելի քան 10%-ը: Այս դեպքում հաշվարկվում և վճարվում է մեկ տարվա համար ակնկալվող բերքի արժեքը: Սա վճարվում է լրացուցիչ՝ անկախ ծառերի և գյուղատնտեսական մշակաբույսերի փոխհատուցումից: Երկրորդ հանգամանքն այն է, երբ տեղի է ունենում տեղափոխություն բնակելի շինությունից: Այս դեպքում վճարվում է նվազագույն աշխատավարձի չափից վեց անգամ ավելի համարժեք գումար:

- Բնակելի շինություններից տեղափոխվող ընտանիքները նույնպես ստանալու են տարաբնակեցման նպաստ, որը ներառելու է մեկամսյա գոյատևման և փոխադրման ծախսերը:

- Խոցելի տնեսությունները նույնպես ստանալու են նվազագույն աշխատավարձի վեցապատիկին համարաժեք լրացուցիչ նպաստ: Տնտեսությունների երեք տիպերը դիտարկվում են որպես խոցելի, դրանք են՝ աղքատ տնեսությունները, որոնք «Փարոս» համակարգի շահառուներ են: Եթե կան տնեսություններ, որոնք համապատասխանում են «Փարոս» համակարգի պահանջներին, բայց որոշակի

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

պատճառներով դեռևս համակարգում ցուցակագրված չեն, նրանք կարող են ցուցակագրվել, ծրագրին ներկայացնելով գրանցման փաստաթղթերը և ստանալ լրացուցիչ եկամուտ: Տնտեսությունների երկրորդ խումբը ղեկավարվում է միայնակ մայրերի, իսկ երրորդը՝ միայնակ թոշակառուների կողմից:

13 ՀՂՈՒՄՆԵՐ

- «Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. http://www.meteomonitoring.am/
- ՀՀ Շրջակա Միջավայրի Նախարարություն. http://www.env.am
- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե. **http://www.minurban.am**
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. **http://www.mtad.am**
- «Ճանապարհային Դեպարտամենտ» Հիմնադրամ, Հաշվետվություններ. **https://armroad.am/am/safeguard/environmental-impact/el-reports**
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. **http://www.psrc.am/am/sectors/electric/license-companies**
- ՀՀ ազգային ատլաս, հ. 1: 2007 թ
- ՀՀ մարզեր և Երևան քաղաք. 2015 թ
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. **http://www.armstat.am**
- Սյունիքի մարզի պաշտոնական կայք. **http://syunik.mtaes.am/**
- «Զանգեզուր» կենսոլորտային համալիր. **http://www.zangezurkh.am**
- Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայք. **http://www.zcmc.am/eng/**
- Հարավային ավազանի կառավարման կազմակերպության ամփոփում, 2016 թ
- Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002 թ,
- Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ). Սիսիան-Քաջարան (Հյուսիս-հարավ միջանցք) ճանապարհահատվածի ծրագիր, 2019թ.:

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

ՀԱՎԵԼՎԱԾ 10: ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

15603

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 27 » 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0207-23

Ձեռնարկողը՝ «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ
Գրիբոյեդով փ. / 1 և / 12

Գործունեությունը՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր՝ Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Նյութիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0207-23

«27» 11 2023թ.

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր՝ Տրանշ 4. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր
Գործունեության կատեգորիան	«Բ»
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան և Քաջարան համայնքների բնակավայրեր

Ներածական մաս: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը (ՀՀՃՄ) Հայաստանի գլխավոր ճանապարհն է, որը կապում է երկրի հարավային և հյուսիսային սահմանները՝ Մեղրի-Երևան-Բավրա 556 կմ երկարությամբ ճանապարհով: Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը ՀՀՃՄ-ի տեխնիկապես ամենաբարդ հատվածներից է, որն անցնում է լեռնային տեղանքով, պահանջում է 27 կամուրջների և 9 թունելների (ներառյալ 8.6 կմ երկարությամբ Բարգուշատի թունելը) կառուցում և արագության ու գրադիենտի չափանիշներով համապատասխանում է սահմանված կատեգորիային: Նոր ճանապարհահատվածը կհամապատասխանի ճանապարհային անվտանգության միջազգային չափանիշներին: Այն էապես կնվազեցնի ճանապարհի ուղղահայաց թեքությունը (համեմատած ներկայիս տարբերակների հետ) և երթուղու երկայնքով բարձրությունները: Ծրագիրն իրականացնում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի միջոցով: Ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել Կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր 4-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» № 981-Ն որոշումը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի, 5-րդ մասի՝ 3)-րդ կետի ա. ենթակետի՝ Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցումը և շահագործումը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս: Ծրագիրը նախատեսում է մոտավորապես 60 կմ երկարությամբ մեկ երթևեկելի մասով՝ մեկ ուղղությամբ երկու երթևեկելի գոտիներով, իսկ հանդիպակաց ուղղությամբ՝ 1 երթևեկելի գոտիով ճանապարհ: Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ուղեգծի տեղադրության համար առաջարկել է այլընտրանքային տարբերակներ՝ ֆինանսական, տեխնիկական, տնտեսական, և բնապահպանական տեսանկյունից ընտրվել է նպատակահարմարը:

Տրանշ 4՝ Սիսիան-Քաջարան 60 կմ ճանապարհահատվածը սկսվում է Մեծ Իշխանասար լեռան հարավից (3550 մ), հատում է Մ2 մայրուղին, անցնում Որոտան գետին հարող սարի ձախ լանջով, հատում Որոտան գետը՝ Շամբի ջրամբարի վերին հատվածով, անցնում Բարգուշատ լեռնաշղթայով (3000 մ և բարձր)՝ Լորաձոր վտակի ձախ եզրով, անցնում Ողջի գետի հովտային աջ մասով՝ Նոր Աստղաբերդ (Գեղի) համայնքի մոտակայքով, հասնում է Կապան-Քաջարան ճանապարհային հատվածի աջ կողմի լեռնալանջ՝ շարունակվելով դեպի Քաջարան քաղաքի մուտքը:

Ճանապարհն անցնում է 6 ուղղահայաց լանդշաֆտային գոտիներով (ցածր և միջին լեռներ, միջին լեռնային անտառ, միջին լեռնային տափաստան, միջին լեռնային մարգագետնային տափաստան, բարձր ենթաալպյան լեռներ, բարձր ալպյան լեռներ) և կառուցումը կարող է ունենալ անմիջական և անուղղակի ազդեցություններ՝ շրջակա միջավայրի ֆիզիկական և կենսաբանական ռեսուրսների, հնագիտական/պատմական վայրերի և մշակութային հուշարձանների վրա:

Նախագծված ճանապարհահատվածին մոտ տեղակայված բնակավայրերն են՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Սիսիան քաղաքը և Իշխանասար, Ույծ, Աղիտու, Նորավան, Վաղատին, Որոտան, Շամբ, Դարբաս, Գետաթաղ, Լոր, Շենաթաղ գյուղերը և Քաջարան համայնքի՝ Քիրս, Գեղի, Գետիշեն, Լեռնաձոր, Նոր Աստղաբերդ, Կավճուտ, Ձագիկավան գյուղերը: Համայնքների միմյանցից կտրված լինելու պատճառով՝ սոցիալական ազդեցությունները հաղթահարելու համար նախատեսված է կառուցել երեք տարբեր մակարդակների վրա գտնվող փոխհատումներ՝ ուղեանցներ, որոնք կապահովեն կապը տեղական ճանապարհների և համայնքների հետ:

Նոր ճանապարհահատվածի ծրագիծը նախագծված է և կկառուցվի այնպիսի չափանիշներով, որոնց արդյունքում կապահովվի ճանապարհային գծանշումը, ճանապարհային նշանների համակարգը և կներառի W-ածև մետաղական արգելափակոցներ, ջրահեռացման համակարգեր, ջրթող խողովակներ, ուղեանցներ, ստորգետնյա անցումներ և կողնակներ:

Ընդհանուր առմամբ երկաթբետոնե կառույցներն ընդգրկում են՝

- 3 նոր տարբեր մակարդակների վրա գտնվող փոխհատումներ (որոնք բոլորն էլ ուղեանցներ են) և մեկ ստորգետնյա անցում:
- 4 գյուղատնտեսական ստորգետնյա անցումներ՝ մեքենա-մեխանիզմների, հետիոտների և կենդանիների համար (կմ 5+780, կմ 7+055, կմ 15+310, կմ 21+ 854) վայրի կենդանիների և անասունների համար
- 27 կամուրջներ, որոնցից երեքն անցնում են Որոտան, Լորաձոր և Գեղի գետերի վրայով, իսկ մյուսները կիրճերի վրայով: Կամուրջներից հինգը երկաթբետոնե են, 22-ը՝ պողպատե:
- խողովակներ՝ մակերևութային ջրերի և ոռոգման համակարգի համար և 6295 հավաքովի՝ Ø-1-22 տիպի երկաթբետոնե վաքեր:
- 9-ը թունելներ՝ մոտ 12.5 կմ ընդհանուր երկարությամբ: Ամենակարճ թունելի երկարությունը 359 մ է, իսկ ամենաերկարը, որը կոչվում է «Բարգուշատ», ունի 8.6կմ երկարություն:

8 թունելների օդափոխությունը իրականացվում է բնական օդափոխությունով, ելնելով թունելների երկայանական թեքությունից և երկարությունից, իսկ ամենաերկար թունելի համար նախատեսված է հատուկ օդափոխության համակարգ: Այս թունելի համար) սահմանվել է նախագծման բարձր չափանիշներ /էլեկտրականություն, լուսավորություն, ազդանշանում, հրդեհաշիջում, տեսահսկում, ռադիո և այլն/:

Ճանապարհային լուսավորության համակարգը կապահովվի միայն փոխհատումներում:

Ճանապարհի՝ 31+820 պիկետից 34+000 պիկետն ընկած հատվածն անցնում է «Զանգեզուր» պետական արգելավայրի տակով՝ թունելով, որից հետո մոտ 1800մ երկարությամբ շարունակվելով դուրս է գալիս երկրի մակերևույթ: Արգելավայրի սահմաններում թունելն անցնում է երկրի մակերևույթից 600 – 1300 մ խորության վրա: Բարգուշատի լեռնաշղթայով անցնող թունելի մուտքն ու ելքը գտնվում են արգելավայրից դուրս:

Ծրագրի օտարման գոտում տեղակայված հաղորդուղիները ներառում են՝ գազի վերգետնյա խողովակները, ոռոգման խողովակները, ստորգետնյա էլեկտրական լարերը, ջրամատակարարման խողովակները և օդային բարձր լարման հոսանքի մալուխները, որոնք պետք է տեղափոխվեն: Ստորգետնյա գազատար խողովակների տեղափոխությունը ևս ներառված է նախագծում:

Ճանապարհի պատվածքը կազմված կլինի 10 սմ հաստությամբ ավազակոպճից, 30 սմ խճաքարային-ավազային շերտից՝ C-5, 8 սմ հաստությամբ բարձր ծակոտկենությամբ խճային ա/բ՝, 7 սմ խոշորահատիկ խիտ ա/բ (առաջին կարգ, B տիպ) և 5 սմ մանրահատիկ, խիտ ա/բ (առաջին կարգ, A տիպ): Կողնակները կենթարկվեն մակերեսային մշակման:

Երկրաբանական հետազոտությունների ընթացքում տեղորոշվել են հնարավոր սողանքների տարածքներ, որն ընկնում է նախագծված ճանապարհի՝ կմ10+820-կմ10+980 հատվածում (H-8 B3 կմ 10+900): Որպես միջոցառում, լանջի թեքությունը մեղմացնելու նպատակով նախատեսված է՝ վերին հենապատի իրականացում, լանջի բնական թեքության ապահովում՝ 1:1.5 - 1:2.0, լանջի վերնամասի հողամասերից ոռոգվող ջրերի մուտքի արգելափակում:

Կատարվելիք աշխատանքների հիմնական ծավալները ներառում են՝ 5 671 476.80 մ³ հանույթ (որից 34,361 խոր.մ բուսահողի հեռացում) 66. 9147 683.2 մ³, ժայռային հանույթ, 1 437 295.30 մ³ ոչ պիտանի հանույթ, 3.311,148 խոր.մ լիցք, 474612 քառ.մ պատվածք (տաք ասֆալտ): Ժայռային տեղանքի պատճառով լիցքերի կանաչապատում նախատեսված չէ:

Ծրագրի համար առաջարկվել են հողային հանույթի տեղադրման ութ վայրեր, որոնք նախնական քննարկվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ և դիտարկվել են կենսաբազմազանության, սոցիալական և մշակութային ժառանգության տեսանկյունից՝ բացառելով «անթույլատրելի» տարածքները: Հիմնական թունելից փորված նյութի (գրունտի) քանակը գնահատվել է 1.2 մլն.մ³, որի տեղափոխման միջին երկարությունը կազմում է 7 կմ: Հողային հանույթի տեղադրման վայրերի նախագծումը ենթադրում է՝

- Հողի բերրի շերտի հեռացում և ժամանակավոր պահպանում (հաստությունը 30 սմ) հողային հանույթի վրա,
- դրենաժային խողովակի տեղադրում (տրամագիծը 3 մ)՝ ծածկված դրենաժային նյութով և գեոտեքստիլի շերտով՝ գրունտը դրենաժային նյութից առանձնացնելու համար:

Ավելացած հողը կտրամադրվի տեղի համայնքներին՝ իրենց հետագա կառավարման համար, բուսահողի կառավարումը կիրականացվի ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Գործունեության ազդեցության ենթակա տարածքների համար ՇՄԱԳ-ում բացահայտվել են Ծրագրի ազդեցությունները (բացասական և դրական) ֆիզիկական, բնապահպանական, հնագիտական և սոցիալ-մշակութային և տնտեսական ռեսուրսների վրա, ներառյալ՝ աշխատողների և համայնքների բնակչության առողջությունն ու անվտանգությունը: Նախքան շինարարությունը օտարման գոտում գտնվող հողերն ու շինությունները պետք է օտարվեն, շինությունները՝ քանդվեն: Կկատարվի ամբողջական

սոցիալական ազդեցության գնահատում և կմշակվի Հողի օտարման ու տարաբնակեցման ծրագիր:

Առաջարկվել է համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ ճանապարհի նախագծումից մինչև շահագործման և պահպանման ժամանակահատվածը: Մեղմացնող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ի (Բնապահպանական կառավարման պլան) ենթապլաններում:

Դաշտային հետազոտությունների ընթացքում Սիսիան-Քաջարան միջպետական ավտոմայրուղու երկայնքով գրանցվել են պատմամշակութային, հնագիտական և բնության հուշարձաններ, որոնք նախագծված ճանապարհի ծրագծի երկայնքով կարող են կրել ուղղակի և անուղղակի ազդեցություններ: Հնարավոր ազդեցությունները մեղմելու համար ըստ անհրաժեշտության նախատեսված են իրականացնել ծրագծային փոփոխություններ, պեղման տեղափոխման աշխատանքներ կամ պահպանական պատնեշների կառուցման աշխատանքներ: Մշակութային և բնության հուշարձանների պահպանության միջոցառումներն իրականացվելու են ՀՀ մշակույթի և բնապահպանության նախարարության ընթացակարգերին համապատասխան:

Նախագծված տարածքում իրականացվել է ֆաունայի և ֆլորայի հետազոտություններ: Ուսումնասիրվել են էնդեմիկ և վտանգված տեսակները (որոնք ունեն հատուկ պահպանության կարիք, գրանցված են ՀՀ Կարմիր գրքերում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում) և կարող են հանդիպել ուսումնասիրված տարածքում (կամ դրա հարակից տարածքներում): Համաձայն ուսումնասիրությունների արդյունքների՝ ճանապարհի ծրագծի երկայնքով գրանցվել է Կարմիր գրքում գրանցված բուսական աշխարհի 10 վտանգված տեսակ, որոնք ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման ընթացքում կարող են ենթարկվել հնարավոր ազդեցությունների /հիմնականում Շենաթաղ գետի ավազանում և Քաջարան համայնքի հարակից տարածքներում/: Ազդեցության գոտում նման բուսական, կամ կենդանական տեսակների հայտնաբերման դեպքում ԲԿՊ-ում նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումները (տեղափոխում), կառավարելի կդարձնեն ազդեցությունները և պահպանության միջոցառումները կիրականացվեն սահմանված գործընթացներով՝ համապատասխան մասնագետների կողմից:

Դաշտային այցելությունների ընթացքում ուսումնասիրվել է նաև կենդանիների հնարավոր միգրացիոն ուղիների տեղակայությունը, և բացահայտվել են միգրացիոն անցումների տեղադրման հնարավոր վայրերը: Ջրահեռացման համակարգի (ջրթող խողովակներ, ուղղանկյուն խողովակներ) որոշ տարրերի պիկետաժը համընկնում է կենդանիների միգրացիայի համար նախատեսված անցումների տեղակայման վայրերի հետ: Մայրուղու երկայնքով (Սիսիան - Դարբաս, Դարբաս - Շենաթաղ, Կիցք – Գեղի հատվածներ) նախատեսվել են անցուղիներ փոքր կաթնասունների համար, որոնց միջոցով կապահովվի ճանապարհով անվտանգ անցումը: Կիցք-Գեղի հատվածում (որտեղ գտնվում է ամառային բնակատեղից ձմեռային բնակատեղի անցնելու արահետը) նախատեսվել են նաև «կանաչ կամուրջներ»՝ այնտեղ ապրող խոշոր կաթնասունների վտանգված տեսակների մեծ բազմազանության տեղաշարժի համար: Այնուամենայնիվ, տարածքում պետք է կատարվի մանրամասն հետազոտություն՝ հայկական մուֆլոնների և բեզոարյան այծերի միգրացիոն ճշգրիտ ուղիները գտնելու համար: Որպես պաշտպանիչ միջոցառում՝ պահանջվող վայրում մայրուղին պետք է պաշտպանված լինի ցանկապատով՝ թույլ չտալով կենդանիների մուտքը դեպի ճանապարհ: Իսկ շինարարության փուլի համար նախատեսված է ժամանակավոր պաշտպանիչ պատնեշներ այն հատվածներում, որտեղ կենդանիները հաճախ են հանդիպում:

Նախագծված ճանապարհի շինարարության ենթակա տեղանքում բերրի հողաշերտի հզորությունը տատանվում տատանվում է 15 – 25 սմ սահմաններում:

Հանման ենթակա բուսաշերտը կուտակվելու է աշխատանքային հարթակների մոտնախատեսվող 5 լցակույտերում /որտեղ հատուկ միջոցառումներով պահետավորվելու է/, որոնց տեղադիրքերի կոորդինատները, բնութագրերը և քարտեզները ներկայացված են ՇՄԱԳ-ի Հավելվածներում: Բուսաշերտի մասը օգտագործվելու է շինհրապարակի վերականգնման նպատակով, իսկ ավելացվածը՝ հետագա կառավարման համար կտրամադրվի համայնքներին:

«Սիսիան-Քաջարան» միջպետական ավտոմայրուղու շինարարական աշխատաքների ընթացքում նախնական հաշվարկներով կհատվեն ավելի քան 6000 (6068) ծառեր, մոտ 10000 թփեր հետևյալ 4 հատվածներում՝ Դարբաս – Շենաթաղ-Բարգուշատ լեռնաշղթայի թունել (354 ծառ), Քարուտ – Վերին Գեղավանք (1276 ծառ),Վերին Գեղավանք – Կավճուտ (542 ծառ), Լեռնաձոր – Քաջարան (2971 ծառ), որոնք գտնվում են ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի և Կապանի անտառտնտեսությունների տարածքներում: Շինարարական աշխատաքների ընթացքում ազդեցության ենթակա ծառաթփային բուսականության մակերեսը կկազմի 294 617 82մ²:

Կտրված ծառերի դիմաց պետք է տնկվեն նոր ծառեր և թփեր՝ 6:1 հարաբերակցությամբ (Կարմիր գրքային տեսակները՝ 10:1, եթե այդպիսիք կլինեն): Տնկված ծառերը պետք է խնամվեն 3 տարի՝ մինչև դրանց կենսունակ դառնալը: Շատ կարևոր է օգտագործել չոր կլիմայական պայմաններին և փոշու ազդեցություններին դիմացկուն ծառատեսակներ: Կապալառուի կողմից պետք է պատրաստվի ԲԿՊ՝ ծառերի տնկման համար, որը պետք է ներառի տնկման սխեմա, տնկվող ծառերի տեսակային կազմի և տնկման վայրերի վերաբերյալ տեղեկատվություն և համապատասխան թույլտվություններ համայնքներից և համապատասխան մարմիններից:

Ծրագրից ակնկալվող հնարավոր ազդեցությունները ներառում են՝ հողի էրոզիան, աղմուկի և թրթռման բարձրացած մակարդակները, օդի, հողի ջրի որակը, աշխատանքների հետևանքով և թունելների փորումից ու պայթեցումից առաջացած հատուկ ազդեցությունները, սոցիալական ազդեցությունները և այլն: Նշված ազդեցությունները կդիտվեն միայն շինարարության ընթացքում և կուղեկցվեն ծխագազերի, փոշու, աղմուկի, մնացորդային գրունտի առաջացմամբ, յուղի և վառելանյութի արտահոսքերով, պինդ և հեղուկ թափոնների առաջացմամբ, շինհրապարակի տեղադրմամբ, կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքների ժամանակահատվածը կկազմի մոտ 6 տարի: ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է շինարարական աշխատանքների ազդեցությունը՝ մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության և պատմամշակութային հուշարձանների վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական արտանետումները կառաջանան հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի ու տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ: ՇՄԱԳ-ում հաշվարկվել են շինարարության փուլում արտանետումների քանակները բոլոր աշխատանքներից, որոնք գումարային կազմում են անօրգանական փոշի՝ 3128.7տ, ածխածնի մոնօքսիդ՝ 1057տ, ածխաջրածիններ՝ 285տ, ազոտի երկօքսիդ՝ 1232տ, պինդ մասնիկներ՝ 125տ, ծծմբի երկօքսիդ՝ 116տ: Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ: Հաշվարկների արդյունքները ներկայացված են երկու պայմանական հարթակների համար /Քաջարանի խմբի և Սիսիանի խմբի/: Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում: Արտանետումների կրճատման նպատակով ԲԿՊ-ում առանձին ենթապլանով նախատեսվել են նվազեցնող միջոցառումներ:

Քաջարան – Սիսիան ճանապարհի շինարարության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումներն իրականացվել է՝ ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Մթնոլորտային օդին հասցվող տնտեսական վնասը գնահատվել է՝ 368084946 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է շարժական և անշարժ աղբյուրների արտանետումների հիման վրա: Նախնական հաշվարկներով՝ հատվող ծառերի փոխհատուցման դիմաց ծախսերը նախնական գնահատվել են 72.816 մլն.դրամ /6068 հատ հատվող ծառի դիմաց տնկվելու է 1:6 հարաբերությամբ/:

Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է աշխատանքների հրապարակների ջրցանի, հողային զանգվածների խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Իրականացվել են ջրապահանջի ծավալների հաշվարկներ՝ ըստ նպատակային օգտագործման: Մեկ հրապարակի ջրապահանջը շինարարության համար կազմում է 2073.6 մ³, հողային զանգվածի խոնավացումը՝ 130390 մ³, աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը հաշվարկվել է 15787.2 մ³: Ջրամատակարարումն իրականացվելու կառուցվող ճանապարհի հարևանությամբ գտնվող համայնքային ջրացանցերից: Աշխատակիցների կենցաղային կարիքների համար (սանհանգույցներ, սննդի սենյակներ) նախատեսվում է վարձել տարածքներ՝ կառուցվող ճանապարհի հարևանությամբ գտնվող բնակավայրերում:

Շինարարության ընթացքում անձրևաջրերը և ձնհալքի հոսքերը կհեռացվեն շինհրապարակից կազմակերպված ձևով: Ջրային ռեսուրսների կանխարգելմանն ուղղված միջոցառումները ներառում են հետևյալները.

- թունելներում ջրահեռացումն իրականացնել ինքնահոս խողովակների միջոցով, /դրենաժային համակարգը հեղեղաջրերի հորերի միջոցով կմիանա սիֆոնային համակարգին/,
- կամուրջների վրա հավաքված անձրևաջրերը մաքրել կամուրջների տակ տեղադրված նավթայուղերի զատիչ սարքերով՝ կանխելով աղտոտիչ նյութերի հոսքը գետ,
- շինհրապարակից կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացում իրականացնել հատուկ մաքրող սարքավորումների միջոցով՝ ջրահեռացման համակարգով,
- տեղադրել պաշտպանիչ շերտերով ջրամեկուսիչ համակարգ,
- ջրահավաք ազանները տեղադրել ճակատային մուտքերում, որտեղ կհավաքվեն ջրահեռացման համակարգով հեռացվող ջրերը:
- Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կեղտաջրերը հեռացնել սահմանված կարգով՝ գործող կանոնների համաձայն:

Շնարարության փուլում, մակերևութային ջրերի մեջ նավթի և վառելանյութերի ներթափանցումը կանխելու համար, շինհրապարակում նախատեսված է համապատասխան սարքավորումների և մեխանիզմների կիրառում /պաշտպանիչ կառուցվածքներ/:

Շինհրապարակում բետոնի և ասֆալտի գործարաններում առաջացած վտանգավոր թափոնների (այդ թվում՝ օգտագործված յուղ և քսանյութ, անվադողեր, մարտկոցներ, սև և գունավոր մետաղի ջարդոն, օգտագործված եռակցման էլեկտրոդներ, յուղոտված լաթեր, աղտոտված հող, դատարկ վառելիքի, քսանյութերի և քիմիական նյութերի տարաներ և այլն) կառավարման համար սահմանված են սկզբունքներ, հնարավորության դեպքում վերամշակվել/վերօգտագործվել դրանք կամ տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: Կենցաղային աղբը շինհրապարակից պարբերաբար հեռացվելու է մոտակա համայնքային աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգվելու է, մաքրվելու է շինարարական աղբից և թափոններից: Շինարարության հետևանքով

խախտված հողերի տեխնիկական վերականգնումը ներառում է միայն շինարարական հրապարակների մակերևույթի հարթեցման աշխատանքները: Հարթեցումից հետո նախատեսված է իրականացնել կենսաբանական վերականգնում՝ ստեղծելով բուսական ծածկ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինարարության ընթացքում նախընտրություն պետք է տրվի շահագործվող հանքավայրերին, բետոնի և ասֆալտի գործարաններին: Նախագծային փաթեթում առկա են ազդակիր համայնքների ղեկավարների և վարչական ղեկավարների նախնական համաձայնեցումները՝ շինարարական աղբի տեղադրման վերաբերյալ:

Նախագիծը ներառում է ճանապարհի կողնակների երկայնքով կանաչապատում (ծառերի տնկում, խոտի ցանում և սերմնացանում)՝ ողողաքայքայումից խուսափելու համար: Կանաչապատումը կնպաստի բարձրացնել էկոլոգիական արժեքը՝ գեղագիտական, աղմուկի նվազեցման և հողի կառուցվածքի կայունացման տեսանկյունից (հատկապես, այն տարածքներում, որտեղ ճանապարհն անցնելու է Աղիտու, Վաղատին, Շենաթաղ, Լեռնաձոր և Քաջարան բնակավայրերի մոտով):

ՇՄԱԳ հաշվետվությունում առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներկայացվել են 17 ենթապլաններով (որոնք հիմնված են լավագույն բնապահպանական կառավարման միջազգային փորձի վրա) որոնցում սահմանվել են այնպիսի սկզբունքներ միջոցառումներ, որոնց կիրառմամբ կկանխարգելվի կամ կմեղմացվի ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները և ազդեցության ենթակա տարածքներին հասցվող վնասը: ԲԿՊ-ն հանդիսանում է ՇՄԱԳ-ի անբաժանելի մաս, ներառվելու է մրցույթային և պայմանագրային փաստաթղթերում:

ԲԿՊ-ն ներառում է նաև մոնիտորինգի գործողություններ, որոնք Կապալառուին կուղղորդեն ստուգելու Ծրագրի հետևանքով առաջացած բացասական ազդեցությունները կանխարգելելու և վերահսկելու համար: ԲԿՊ-ի շրջանակներում մոնիտորինգը ներառում է մոնիտորինգի ելակետային տվյալների /նաև փոշու, աղմուկի և թրթռման/ հավաքագրումն, ինչն օգտագործվելու է նաև տարբեր պարամետրերի չափումների համեմատական վերլուծության նպատակներով: Ջրի և օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրումը նախատեսված է իրականացնել շինարարական աշխատանքների մեկնարկից 21 օր առաջ: Շրջակա միջավայրի պահպանման նպատակով բնապահպանական միջոցառումների իրականացման արժեքը, որը ներառված է Ծավալների ամփոփագրում, հաշվարկված է աշխատանքների արժեքի 2%-ի չափով:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ տեղական ինքնակառավարման մարմինները /Սիսիանի և Քաջարանի համայնքապետարաններ/ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները /նաև՝ Անտառային կոմիտեն, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը/, ներքին գործերի, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կատաստրի կոմիտեն, քաղշին կոմիտեի որոնց կողմից ներկայացված կարծիքները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվությունում: Փորձաքննության գործընթացում պարզվել է, որ Սիսիան-Քաջարան կառուցվող ճանապարհահատվածի շուրջ 60 հա մակերեսով տարածքները հանդիսանում են պետական սեփականության անտառային հողեր և անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցումը պետք է կատարվի տարածքի առնվազն կրկնապատիկի չափով՝ 1 հա-ին օգտագործելով 3000 հատ սերմնաբուսակ, ընդամենը՝ 360000 հատ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հանրային քննարկումներում (ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան և Քաջարան համայնքներում և ազդակիր՝ Գեղի, Դարպաս բնակավայրերում) շահագրգիռ հանրության կողմից Ծրագրի իրականացումն արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ /հատվող ծառերի դիմաց անտառպատման աշխատանքների, դրանց իրականացման տարածքների և խնամքի ապահովման, կենդանիների միգրացիոն ուղիների, թունելի կառուցման ժամանակ պայթեցման աշխատանքների հնարավոր ազդեցությունների, բնակիչներին սոցիալական փոխհատուցումների վերաբերյա/, որոնց տրվել են պատասխան պարզաբանումներ:

Ակնկալվում է, որ «Սիսիան-Քաջարան» միջպետական ավտոմայրուղին զգալի զարգացման հնարավորություններ կստեղծի Սիսիանի և Քաջարանի տարածաշրջանների հեռավոր բնակավայրերի համար և կունենա դրական ազդեցություն՝ ապահովելով նաև շինարարության փուլում համայնքների բնակչությանը կարճատև աշխատատեղերով: Շինարարության ընթացքում մոտակա բնակավայրերը կկրեն ժամանակավոր բացասական ազդեցությունների (փոշու արտանետումներ, աղմուկ, ճանապարհների անհասանելիություն և այլն), սակայն դրանք կլինեն կարճաժամկետ և ԲԿՊ-ում նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ կհասցվեն թույլատրելի նորմերի սահմաններին:

Ծրագրի իրականացմամբ գոյություն ունեցող ճանապարհը (560 կմ երկարությամբ, երրորդ կարգի՝ 30-90 կմ/ժ արագության սահմանափակմամբ) կվերածվի 470 կմ երկարությամբ, 100-110 կմ/ժ արագության սահմանափակմամբ արդիականացված՝ առաջին կարգի արագընթաց ճանապարհի, ինչը հնարավորություն կտա տվյալ հատվածն անցնել ավելի կարճ ժամանակահատվածում, մեծացնելով ճանապարհի հարմարավետությունն ու անվտանգությունը, ինչպես նաև Հյուսիս – հարավ Ճանապարհը դարձնել արևելքից արևմուտք բեռնափոխադրման և ուղևորների համար տարանցիկ ճանապարհ TRACECA-ի և «Մետքսե ճանապարհ» ծրագրերի շրջանակներում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև շինարարական աշխատանքների մեկնարկն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է՝

- իրականացնել ճանապարհի աղդեցության գոտում գտնվող հողերի և շինությունների օտարում՝ Սոցիալական ազդեցության գնահատման և Հողի օտարման ու տարաբնակեցման ծրագրերին համապատասխան,
- ստանալ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և կնքել բոլոր պահանջվող պայմանագրերը՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների տեղափոխման, ասֆալտի և բետոնի գործարանների, հանքավայրերի շահագործման, շինարարության փուլի ջրօգտագործման համար, ինչպես նաև ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների և կեղտաջրերի հեռացման կամ վերամշակման համար,
- համապատասխան մարմինների /Սիսիան, Քաջարան համայնքների ղեկավարներ/ հետ համաձայնեցնել բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման վայրերը և հողային հանույթի/գրունտի տեղադրման վայրերը և դրանց նախագծերը՝ տեղադրման համար բացառելով այն վայրերը, որոնք անթույլատրելի են՝ սոցիալական և մշակութային ժառանգության և բնապահպանական տեսանկյունից /ինչպես օրինակ՝ Բարգուշատի թունելի հարավային մասում, որտեղ կարող է խոչնդոտվել խոշոր կաթնասունների տեղաշարժը/,

CONSECOARD ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է «ՔՈՆՍԵԿՈՒՐԴ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ

- Ծառերի և թփերի տնկման տարածքները և աշխատանքները համաձայնեցնել համայնքների ղեկավարների և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է սերտորեն համագործակցել «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ, մասնավորապես՝

- կնքել անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման պայմանագիր, որով կիրականացվի շուրջ 60 հա անտառային հողի եռապատիկի չափով (180 հա) անտառապատման աշխատանքներ՝ տնկելով 540000 հատ ծառ և իրականացնել դրանց հետագա հինգ տարիների խնամքի և լրացման աշխատանքները
- կատարել հատման ենթակա ծառերի հաշվառում և հատման աշխատանքների իրականացման ու գոյացող փայտանյութի տնօրինման վերաբերյալ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

3. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ԲՀՊՏ-ների մասին, «Կենդանական աշխարհի մասին» (2000թ.), «Բուսական աշխարհի մասին» ՀՀ (1999թ) ՀՀ օրենքների պահանջներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն, 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն, 2014 թվականի օգոստոսի 14-ի N781-Ն, 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գրքերը հաստատելու մասին» N71-Ն և 2010 թվականի հունվարի 29-ի ՀՀ բույսերի Կարմիր գրքերը հաստատելու մասին» N72-Ն և որոշումների պահանջներով /հաշվի առնելով, որ հատման ենթակա գիհու տեսակներում «Գիհի կազակականը» ներառված է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում:

4. Բերրի հողի կտրումը, պահեստավորումը, պահպանումը, հետագա օգտագործումը, կամ վաճառքն իրականացնել ՀՀ կառավարության 2017 թ. նոյեմբերի 2-ի N 1404-ն, 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումների և 2021 թվականի ապրիլի 29-ի N676-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5. Ծրագծի երկայնքով աղդեցության ենթակա պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիրներն ու մեթոդներն (ուսումնասիրություն, պեղում, ուղեգծի տեղափոխում, այլընտրանքների դիտարկում) անհրաժեշտ է իրականացնել ԿԳՄՍ նախարարության գործառույթներին համապատասխան:

6. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՔՈՆՍԵԿՈՈՐԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր՝ Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հերիքնազ Մկրտչյան

9